ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ԷՆԵՓԷՍ ՊՄՍԵՍՑ

ԺԸ· ՏԱՐԻ 1888 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲԵՐՈՒԶԱԿ

(ՓԻՐՈՒԶԷ)

— Ահագին է այդ պատմութիւնդ, դոչեցին ամեն կողմէ առ պառաւն։

— Այս ինչ կատակ է, ըսաւ կոմսը ժպտելով և ուսերը բարձրացնելով։

— Կ'հաւանիմ որ խելքի դէմ բան մ'է այս . . . սակայն պիտի պատմեմ ձեզի իրողութիւն մ'որ հերուն պատահեցաւ ի Վարշաւիա, և երբ Բեղրպուրկէ կ'վերադառնայի՝ ականատես վկայի մը բերնէն պայն լսեցի։ Դօղիլեֆ ռուս գնդապետն ուրիշ սպայակներու հետ այդ քարն ընծայած էր իր նշանածին՝ Միտսկվոյի կոմսի աղջկան։ Շատ տարօրէն ալարագայից մէջ, զոր պիտի յայտնեմ, այդ զոհարն ընկած էր այդ գնդապետին ձեռքը։ Երբ կարս քաղաքը կ'գանուէր, տեղական իշխանութիւնն ի պատիւ Դօղիլեֆի հանդէս մը կ'կազմէ, ուր աքանչելի գեղեցկութեամբ պարուհի մը կ'երևի։ Այս պարուհւոյն վիզն և ուսերը կիսամին ծածկուած էին նրբաթել շղարշով մը, որ մերկ

թևին վերի կողմէն խոշոր բերուզակի մը միջոցաւ կցուած էր՝ իբրև ճարմանդ։ Երբ նա ինքն իր վրայ կ'դառնար, թևերն իր գլխին վերևը բարձրացուցած և աչերը կէս մը զոց, յանկարծ սոսկալի դեղնութիւն մը կ'պատէ դէմքը։ Պարուհին խոյն ճեռքը կ'տանի սրտին և գետինը կ'ընկնի անկենդան։ Շուտ մը վեր կ'վերցնեն զանի, բայց նա արդէն դիակ մ'էր։ Անկման միջոցին՝ ճարմանդը քակուեր էր, և ալարուհւոյն թևին վերևը կ'երևէր կապտագոյն, արիւնալի արատ մը . . . ։

— «Այս է եղեր իր ճակատագիրն, կ'ըսէ պատարիւնութեամբ մը տան տէրն»։

Իսկ դնդապետը կ'իմանայ թէ այդ քարը տարիներ առաջ դանուեր է եղեր ծովամոյն կնկան մը վրայ, երբ յունական նաւ մը պտեր է զայն ծովուն վրայ ծփուն՝ Ջարտանէ ի նեղուցէն անդին։ Ահա քար մ'որ յեղակարծ մահուան դատապարտել կ'թուէր ամեն կիներն ու աղջկունքն որ կ'յանդգնէին զայն գործածել իբրև զարդ։

Դօդիլէֆ չատ ուշադրդիւ կ'գտնէ այդ պատմութիւնն, և աղէտաբեր քարն տանալու փափաք կ'յայտնէ։ Խոյն կ'կատարուի իր փափաքը։ Եւ որովհետև յեփին ծաբ սկէպտիկեան ոգի մ'ունէր, և ոչ իսկ մաքէ կ'անցընէ՝ նշանածին հարսանեկան զամբիւղը պատրաստելու միջոցին, զգուշանալ դնելու ա նոր մէջ առարկայ մ'որ այնքան չարաշուք համբաւ մ'ունէր։ Անտարակոյս անծանօթ էր ձեղի, պարոններ, Բօլա Միտսէվքին։ Տեսած էի այդ օրիորդն իմ նախորդ մի ուղևորութեանս ժամանակ։ Հրաշագեղ աղջիկ մ'էր. աննման փայլ մ'ունէր իր դէմքին գոյնն, ինչպէս սահպ ունին Հիւսիսի չքնաղ աղջիկունք։ Սև սամի նման գիսակը կ'բոլորէր թագուհւոյ վայել ճակատն, որու ատրճև կ'փալփլէին անուշ և գգուելի նայուածք ունեցող երկու երկնագոյն աչքեր։ Գնդապետը խենթի պէս կ'սիրէր այս չնորհագեղ օրիորդը։ Հարսանեկան արարողութենէ ետք՝ կոչնականները նստան սեղան, որու կ'գահակալէր Միտսէվքա՝ կայտառ, զուարթերես ու գոհարազարդ, իսկ բերուզակն . . . ճիշտ այս բերուզակը կախած էր մարգարտաշար թելով մը բայ վզին վրայ, որ քան իր չքնաղեստի անդուսն աւելի սպիտակ էր։ Երբ գաւառին հրամանատարը բարձրաձայն առաջարկեց գինի հարս ու փեսային կենաց, երբ մէն մի կոչնական իր բաժակը կ'բարձրացնէր խնդալին և չնորհաւորական կ'չիւննեբուէլ, ան ու դող ղգացին ամենքն տեսնելով յանկարծ որ գե-

զանի հարսն աթոռին յենակին վրայ կ'տատանէր, կ'կքէր, ջրթունքը գուռնաթափ և այտերը մեռելատիպ։ Ամեն մարդ կարծեց թէ թալուկ մը, ջղային հարուածմ'է որ կ'նեղէ հարսն . . . ։ Իսկոյն հասաւ բժիշկ մ'որ ի գուր ջանաց անոր կենդանութիւն տալ . . . ։ Մինչև անդամ արիւն հանելու փորձ մ'ըրաւ, բայց արիւն չելաւ . . . ։ Նոր հարսը մեռած էր . . . իսկ բերուզակն որ վզէն կախուած էր չարժելով՝ ամենքը տեսան մսին վրայ հրազոյն արատ մը՝ ճիշտ քարին ծաւալին չափ . . . ։

— *Ի՞նչ բաներ կ'պատմէք մեզի, սիրելի պատուն ։*

— *Պատուոյս վրայ կ'հաւատամ, որ ոչ ինչ չիմ հնարեր։ Պատմեցի ձեզի այս դէպքը ճիշտ ինչպէս որ լսեցի Միսէվաքի կոմսին մի ազգականէն՝ որ ներկայ էր խնջոյքին . . . և իր քաջածանօթ ճշմարտարանութիւնը չներեր բնաւ որ տարակուսիմ իր պատմութեան վրայ . . . ։*

— *Հապա բերուզակն ինչ եղաւ ։*

— *Գնդապետան յուսահատ յիշեց կարսի աւանդական զրոյցը և դժնդակ դռնարը կորզելով՝ սրահին մի բաց պատուհանէն դուրս նետեց . . . ։ Ընկաւ քարը փոսն որ կ'շրջապատէր դղեակն, և անտարակոյս վերջէն սպասաւոր մը փնտռեց գտաւ և հրէի մը ծախեց զայն, վասն զի չատ չանցաւ անոր կրպակին մէջ տեսայ քարը ։ Այս դէպքը բաւական աղմուկ հանած էր, և հրէայն չկրնալով ծախել քարն ո և է գնով, անչուշտ տուած պիտի լինի իր վիճննացի մի կրօնակիցին, որու մէջտցաւ, իմ սիրելի կոմս, ահա ձեր ձեռքն անցած է ։*

Կոմսն այս պատմութիւնը մտիկ ընելու ժամանակ, քարը մատերուն մէջ առած կ'դարձնէր ուշադիր ։ Երբ պատուն աւարտեց իր խօսքն, վերստին դրաւ նա դռնարը սեղանին վրայ։ Կանթեղի մը լոյսն որ ճոպի կ'անցնէր վօսլօի դինիով լի բաժակէ մը, չիտակ ընկաւ բերուզակին վրայ և արեւնագոյն նշոյլով մը զայն գունաւորեց ։

— *Չեմ կարող երևակայել, ըսաւ կոմսն մի քանի երկվայրկեան լուռ մնալէն ետև, թէ դուք, սիրելի պատուն, այնքան մեծ կարևորութիւն ընծայէք այդ աւանդական զրոյցին, որ զղրէ իմ որոշումս փոխել բերուզակի գործածութեան մասին ։*

— *Թերևս այդպիսի ենթադրութիւն մ'ընէի, եթէ ձեզ լաւ չճանչէի ։ Ձեր դիտաւորութիւնն է . . .*

— *. . . Նուիրել զայն Շէօնաուրֆի կոմսուհւոյն, երբ գոհարն ընդունի զայն կրելու սահմանուած անձին արժանի ազդոյզ ։*

. . . Զանց չպիտի ընեմ, յարեց նա ծիծաղելով, պատմել կոմսուհւոյն ձեր պատմած գրույցներն՝ որոց վրայ սրտապին պիտի խնդայ անշուշտ, ինչպէս որ ես այս պահուս կ'խնդամ:

— Տարակոյս չունինք այդ մասին, պատասխանեց Գոնդրատ իշխանն, քանի որ արդէն դիտենք, ձեր պատմած Գալապրաչի արկածէն, թէ որքան արիասիրտ է կոմսուհին . . . : Մեր բաժանումէն առաջ՝ ներեցէք մեզ կոմսուհւոյն կենաց բաժակ պարպել յարդանօք: Շնորհ ընէիք, սիրելի կոմս, մեր ակնածական նուէրը մատուցանել յոտս կոմսուհւոյն՝ վերադարձին առթիւ ի Վիէննա, որու իբրև ապագայ թագուհեաց մին կ'ողջունենք, լիայոյս՝ որ իր արքայական գաւազանը պիտի կրէ անշնման շնորհօք:

Բոլոր բաժակները բարձրացան լռելեայն և գպան կոմսին բաժակին: Մի միայն Նորատի սպայն՝ պահ մը վարանելէն ետև՝ վար իջեցուց ձեռքն, որպէս թէ չէր տրամադիր մասնակցիլ այդ ցոյցին:

— Զգուշացէք, Պէլա, ըսաւ անոր մեղմ ձայնով մը պառոնն, որ իր մօտ կ'գտնուէր: Միթէ միտք ունիք ամենուն աչքը ձեր վրայ դարձնել:

Այն ժամանակ՝ երիտասարդն ինքզինք զսպելով՝ առաւ բաժակն և մինչև աչացը բարձրութեան տանելով, առանց սակայն կոմսին բաժակին մօտ տանելու,

— Շնորհ ընէիք հաւաստել կոմսուհւոյն, ըսաւ նա հաստատ ձայնով մը, թէ չկայ այս տեղ անձ մ'որ չտածէ իրեն համար ծայրագոյն զարմացման ամենախորին զգացումը:

— Այս մասին չունիմ կասկածի ստուերն անգամ, պատասխանեց կոմսն, Պէլաի յառելով թափանցիկ ակնարկ մը: Պարոններ, կոմսուհին յետին ծայր շնորհապարտ պիտի մնայ ձեզ այդ ձեր ազնիւ գղացման համար, ուստի կ'փութամ իր կողմէ յայտնել ձեզ իր շնորհակալիքը:

Այնուհետև հոչնականներն ելան և իրարմէ բաժնուեցան: Պահ մ'ետք՝ ագմկալի ծառուղին թափուր և ամայի մնար մ'էր դարձած, ուր կ'թաւալէին միայն որոտընդոստ սրընթաց կառքերն և դէպ ի քաղաք կ'տանէին հիւրերն:

Բ

Եւ ծիլ էր Պէլա Լոմանի կոմսն: Գերմանիոյ Նիզամ Ա կայսեր

հեծելազօր դունդին հարիւրապետն էր. հունգարական քաջասիրտ և ասպետական ազգին ընտիր մի զաւակն, այն ազգին որ կ'սիրէ գինուց չկախիւնն, որ փայլուն դիւցազներզուարթեանց և չքեղաշուք երիվարական մարզից սիրահար է, որ չանգոսներ թատերական փառայեղ հանդէսներ՝ երբ պատեհ առթիւ կը-կազմուին, որ եռանդալից կ'պաշտե իր ազգային հիմնարկութիւններն, իրաւունքն ու լեզուն՝ այնքան հարուստ և ազդեցիկ լեզու, որու միակ թերութիւնն է օտարաց համար սորվելու դրեթէ անհնարութիւնն, իր գերապանծ աւանդութիւններն, իր պատմութիւնն՝ որու նկարագիրը կ'հնչէ իբրև երգ մարտական չեփորայի:

Եւ այս մեր նորատի զօրականն իր ազգին ամեն բարեմասնութիւններն ունէր, և հակամէտ էր մինչև իսկ ծայրագոյն աստիճանը տանելու: Իր քաջասրտութիւնը յանդգնութեան սահմանը կ'հասնէր և իր արտասովոր չհատակութիւններն Պոսնիոյ վերջին պատերազմին մէջ, ամեն բերան կ'պատմէր: Երբ՝ զօրաբաժնի հրամանատար՝ Վուրդէմպէրկի Կիւօմ իշխանը՝ կը-պատուիրէ Պլա կոմսին խուզարկութիւն մ'ընել դէպ ի Լիմնօ շատ դերբուկ և թշնամիներով լի երկրի մը մէջ, ինքն միայնակ, մերժելով ամեն ուղեկից, ճամբայ կ'ելնէ իր Սղէլլօ անուն ամեհի երիվարն հեծած՝ որ՝ այս արշաւանքն եղաւ՝ աւստրօ-հունգարական հեծելազօրուն մէջ առասպելական հոչակ կ'ստանայ: Պլա նախ՝ երեսուն հազարամեղր ընդ առաջ մղուեր, ապա ձախ կողմը զարնելով՝ թշնամւոյն դրից յետսակողմը գտնուեր և անոր շուրջը բոլորելով անհնարին յանդգնութեամբ և յաջողութեամբ ի գերև հաներ էր, իր նժոյգին արագութեան շնորհիւ, յանկարծանաս վաշտերու հետամտութիւնն, և ի վերջ ոչ առ ոչ վերադարձեր էր իր բանակատեղին ութսուն հազարամեղրէն աւելի արշաւ մ'ընելէ ետք, և շատ կարևոր տեղեկութիւններ բերեր էր թշնամւոյն ռազմական վիճակին վրայ:

Իր անկեղծութիւնը քաջութեանը չափ նշանաւոր էր: «Պարկեշտութիւն չէր միայն իր ունեցածն, այլ պարզմտութիւն» կ'ըսէր, Պլայի վրայ խօսելով՝ անուանի Սղօլպերկ սեղանաւորն, որ Վիէննայի ելմտական աշխարհին առաջնակարգ անձերէն մին էր:

Կոմսն թեթևակի երաշխաւոր եղած էր իր մէկ բարեկամին համար, որ նետուած էր չհադիտական ընդարձակ գործերու մէջ և անյաջող ելած էր: Այս ձախորդութեան վրայ անդադր

չնահագէտն տեղեկային ծանր հարուածի մը վիշտին ինքզինքն էր սպաննած։ Անհամեմատ մեծ էր ձգած պարագն և Լոմանի կոմսին բոլոր հարստութիւնը հազիւ կ'բաւէր պօղելու ահագին պահանջքը։ Սակայն նորատի զօրականը լոկ բնական երաշխաւորութիւն մը տուած էր, վասն զի պայմանագրերն ստորագրելու համար դեռ ևս իրեն չներկայած՝ դրծին դիշերակ եղբն ունեցած էր։ Իր գործակատարներն, առ ի չէոյէ դրաւոր վաստի, արժան դատած էին հանպուցելոյն պարտապաններուն գլանալ դումարն և երաշխաւորութեան վաւերագանութիւնը վիճի ներքև ձգել։

Պէլա՝ որ իր պինդարական ծառայութեան պատճառաւ վիճենայէն հեռու կ'գտնուէր, այդ սկսուած դատին վրայ դիպուածով տեղեկութիւն կ'ստանայ և իսկոյն կ'հեռագրէ իր գործակատարներուն որ չհապանիր բնաւ այդ դատին և կ'պատուիրէ նա կենալ։ Նոյն պահուն կ'յայտարարէր նաև հակառակ կողման թէ իր տուած խոստմամբ աւելի պարտական կ'նկատէր ինքզինքն քան ու և է երաշխագրով, և թէ իր բոլոր հարստութեան զոհողութիւնն այնքան մեծագին չէր երևէր իրեն որքան այն գոհունակութիւնն զոր պիտի ղգար իր բարեկամին յիշատակն ամեն չարասէր ամբաստանութիւններէ ղերծ պահելով։ Այսպէս Պէլա ամրողջովին վճարեց իր բարեկամին պարտքն և հետևապէս բոլորովին կործանման վիհին մէջ ընկաւ։

Ահա այս բացառիկ արդարասիրութեան և ուղղամտութեան արժան է վերագրել իր բոնած հաժետա դիրքն Կոստանդինա-Հիւկելի խնջոյքին ժամանակ, նոյնպէս իր դժկամակութիւնն՝ որով իր բաժան Շէօնտորֆ կոմսին բաժանին չմօտեցուց, թէև այս կոմսն գրեթէ իր մանկութեան ընկերն էր։

Այս վաղեմի յարաբերութեան առթիւ՝ Պէլա թախանձագին հրաւէր մ'ընդունած էր ներկայ գտնուիլ ի պատիւ ուղևորին տրուած մաերմական հանդիսին։ Եթէ այդ հրաւէրն չէր կրցած մերժել, պատճառն այս է որ իր մերժումն թերևս այլ և այլ մեկնութեանց տեղի տար, և Պէլա բնաւ չէր փափաքեր կասկածները գրգռել։ Բայց միւս կողմէ՝ ինքն շատ անարժան պիտի նկատէր իր վարմունքն՝ եթէ կեղծէր՝ երբեմն իր բարեկամն եղող անձին նկատմամբ՝ այնպիսի զգացումներ զոր այլ ևս չէր տածեր իր սրտին մէջ, այն օրէն ի վեր՝ երբ պարագաներն իրենց մէջ անանցանելի վիհ մը բացին։

Այս անհամաձայնութեան բնութիւնն լաւ ևս հասկցնելու

համար, անհրաժեշտ է բաւական սրտայոյզ դէպքի մը պատմութիւնը մէջ բերել, դէպք մ՚որ նախորդ տարուան դարնան մէջ պատահած էր և որու թատրն եղած էր այն սիրուն ճեմելիներէն մին որք վիէննայի շուրջն աքանչելապէս կ՚պատեն։

(Շարունակելի) Ե. ԳՈՐՑԵՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ՝

ԳԱՍ Ա.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԳԱՑԱՐԱՆԱՑ (Շար.)

Շէշփելէ։ — Այնպէս կ՚թուի որ բնութիւնն մեծապոյն բարերարութիւն ընծայած է ըշխփելեաց։ Վասն զի՝ մինչդեռ մէն մի զգայարան յատուկ գործարան ունի, մարդկային մարմնոյն բոլոր մակերևոյթը չօշափելեաց պաշտօնը կ՚վարէ, ունենալով միանգամայն իրրև սպասարկու հրաշալի գործի մը, այս է ձեռքը։

Շէշփելեաց դէմ պատահած ալլազան ծանօթութիւնները։ — Այս ըզգայարանին դաստիարակութիւնն ամենէ կարևորն է, վասն զի ոչ միայն ալլազան և բազմապատիկ ծանօթութիւններ կ՚հաղորդէ մեզ, այլ և այդ ծանօթութեանց արժէքն անուրանալի է։

Սդրարև՝ երկու չատ տարբեր ծանօթութիւններ կ՚ստանանք չօշափելեաց միջոցաւ։ մէկ քանին՝ ինչպէս ցրտի, ջերմութեան, յղկութեան, կարծրութեան զալափարներն մեզի կ՚աւանդուին մեր մարմնոյն բոլոր մասերուն վերնամաշկի միջոցաւ։ Միւսներն ձեռաց շնորհիւ կ՚ընդունինք, ինչպէս ուժգնութեան, ձևի և հաստատութեան ծանօթութիւնները։

Ձեռքն կազմուած է ճշմարիտ ընակներէ, մատներէ, որ իրենց չափազանց չարժականութեամբ, բանուած առարկայից կատարելապէս յարմարելու զօրութեամբ, կարող են միւս զգայարա-

* Տե՛ս Օգոստոս ամսագիր, երես 351։

նայ առաջ բոլոր ծանօթութիւններն ուղղել։ Նիւթին ներկայութիւնն ձեռքով կ'ստուգենք, կ'ըմբռնենք որ մեր անձէն տարբեր է, անոր չուրջը կ'դառնանք, ամէն կողմերը կ'քննենք և ի վերջէ մի քանի վայրկենի մէջ շատ աւելի լաւ կ'ճանչենք զայն քան ինչ որ պիտի կարենայինք իմանալ շատ ամիսներ ուսումնասիրելով զայն՝ նայուածքի միջոցաւ։ Ահա այս պատճառաւ Անաքսակորաս* կըցաւ ըսել. «Մարդս կ'խորհի, վասն զի ձեռք ունի»։

Ծօչափելիքը կրնայ միւս բոլոր զգայարանաց տեղը բռնել, և մինչդեռ ասոնք տէպ կրնան վատթարիլ, չօչափելիքն հապիւ ուրեմն կ'կորսուի։ Հիւանդութեամբ մը թերևս ընդունին գլխովին տեսանելեաց, լսելեաց, ճաշակի և հոտոտելիքի զօրութիւնը։ Գիտենք արդէն որ վերջին երկուքն կրնան մինչև անդամ կորսուիլ ժամանակ մը թեթև տկարութեանց պատճառաւ, ինչպէս ուղեղային հարբուխի։ Ընդ հակառակն՝ չօչափելիքն աւելի տոկուն, աւելի յամառ է, և մի քանի պարագայից մէջ՝ երբ միւս զգայարանքը լիովին անգործ դանուած են, շօչափելեաց օգտակարութիւնն դաստիարակութեան դործին մէջ զգալի եղած է։

Այս ասութեան ի վկայութիւն մէջ կ'բերեն նորատի աժբրիկացի աղջկան մը պատմութիւնն, Լորա Պրիկմանի, որ չօչափելիքէ զատ՝ ամէն զգայարանքէ զուրկ, կարող եղած էր սակայն կատարեալ դաստիարակութիւն մը ստանալ։ Բայց ինչ համեմատութիւն, ինչ հնարագիտութիւն ի դործ դրուած պիտի լինի, որպէս զի նա յաջողի չարագրել օրհներգներ որ ունին իրենց արժանիքը։

Տիարօ§ իր Նոահ կոչեցեալ վէպ դործին մէջ կ'յիշէ Սանտրսըն անուն անգլիացի մը, որ կուրանալով, դիտեր շատ մը չիզդնեբու մէջ լաւերէն չինծուներն որոշել՝ մի միայն իր մատերուն ծայրովը չօչափելէն ետև։

Կ'պատմուի նաև քանդակագործի մը մասին թէ՝ թէև կոյր, բնագիրներուն նմանող շատ ընտիր անդրիներ կ'քանդակէր։

Վերջապէս՝ ամենուն յայտնի իրողութիւն մ'է, թէ՝ դործ-

* Ցշն փիլիսոփայ, իրրև անաստուած ամբաստանեալ, մեռաւ յաքսոր (428 ք. Ա.)։

§ Մատենագիր, խմբագրասէր և փրանսացի թատերդրակ (1713—1784). Ժողովրդային արտի հնարիչն եղաւ. Ընդունեաց հայր անուն թատերդրութեանէ, և մեանգամայն Հանրագիտարանի հիմնադիրներէն մին։

ածելով միայն զաւազան մ'որ կ'օգնէ արգելքներ իմանալու, կայր մը չատ լաւ կ'քալէ փողոցի մը մէջ, և թէ ամեն մարդ, իր ձեռաց չնորհիւ, կ'յաջողի իր ճամբան անարգել գտնել։

Ուրեմն չատ օգտակար է կրթել տղոց չօչափելիքը։ Այս կրթութիւնը մանկութեան ժամանակ պարտ է սկսիլ՝ դնելով անոնց ձեռաց մէջ հաստատուն, այլաձև, տարակերպ առարկաները և, առանց զանոնք տեսնելու, վարժեցնել տարբերութիւնները գտնել։ Վերջէն՝ մայրական դպրոցի մը ուսուցումն պիտի դիւրացնէ այդ դաստիարակութիւնն, որ այնքան կարևոր տեղ կ'բռնէ Ֆրէօպէլի դէնոպին մէջ։

Այս այլազան վարժութիւններն չօչափելեաց ընդհանուր դաստիարակութեան միջոցներն են։ Ապա կ'գան ձեռական արուեստներն որ նոյն զգայարանին մասնաւոր դաստիարակութիւնը կ'կազմեն, ինչպէս՝ դրաւարժութիւնն, թղթի կամ սև տախտակի վրայ գծագրութիւնները, խաւաքարտի կամ թղթի միջոցաւ մանր առարկաներու ձևումն, կարն, բանուածն, այս վերջիններն յատկապէս փոքրիկ աղջկանց համար լինելով։

Լ. Ելեաց պատուիրակ-ԸՆԿԱՆ. — Դաստիարակին նպատակը պարտի լինիլ, լսելեաց զգայարանի մասին, անոր փափկութիւնը զարգացնել որպէս զի այդ զգայարանի միջոցաւ մեր ունեցած ըմբռնումներն կանոնաւորութեան ամեն պայմաններն ունենան։ Ի սկզբան՝ լսելիքն միայն ձայնը կ'ըմբռնէ, բայց փոքր առ փոքր, ուրիշ ծանօթութեանց գործին կ'լինի. ինչպէս՝ արագի, ուժգնութեան, զանդուածի, դաշնաւորութեան աստիճանի, հնչման, և այս միջոցաւ մարդ կ'յաջողի ճանչել զանազան աղմուկներ։

Այսպէս, լսկ լսելեաց չնորհիւ, դիւրաւ կ'ուղղենք մեր ընթացքն դէպ ի վայր մը, փողոցի մը միջև՝ ուր կ'չրջին կառքեր, կանխաւ իմանալով մեր և անոնց մէջ գտնուած հեռաւորութիւնը։ Սակրութեամբ կարող ենք նաև ըմբռնել, բացօդեայ լուսթեան ժամանակ, հեռաւոր աղմուկներ, որ թերակրթ ականջի հպիւ կ'հասնին։

Լսելեաց դաստիարակութեան նպատակն է գնահատել տալ մանկան ձայնի յատկութիւններն, անոր զանազանել տալ արտաքին աղմուկներն, ասոնց հեռաւորութիւնը գտնել ուժգնութեան համեմատ, անխափ ձայներէ զգուշացնել մանուկն և նոյնպիսի ձայներ չհանելու վարժել։ Վերջէն՝ այդ զգայարանը կրնայ մասնաւոր կրթութիւն մ'ընդունիլ, և այս է՝ երաժշտային

պատիարակութիւնն։ Երբ կարելի է մանկան երաժշտական ձգտումն զարգացնել, միշտ օգտակար է սկսիլ դայն։ Ընտիր երաժշտութենէ կ'ընդունինք այնքան անուշ և զուտ այլայլութիւնները որ անտեղի է չվարժել մանկտին այնպէս որ մեզի պէս վայելէն օր մը այդ այլայլութիւնները։

Բայց լսելիքն ոչ միայն պարզ դեղագիտական արժէք ունի, այլ և բարոյական և մտաւորական։ Իրօք լսելիքն է որ մեր առջև կ'պարզէ աշխարհն, որ յօդաւոր ձայնն ըմբռնելով՝ հաղորդակցութեան մէջ կ'դնէ մեզ մեր նմանեաց հետ, որ մեր մտքին և սրտին մէջ անցածն, մեր մտածմունքն ու զգացմունքն ուրիշներու յայտնելու և այլոցն իմանալու կարևոր միջոցն է։ Լսելիքն է որ կ'ընդունի և կ'աւանդէ մեզ մարդկային ձայնն, հոգւոյ արյաքանչն, գիտութեան հրաշալի թարգմանն, որով մանուկն մի օր պիտի ուսանի իր միտքն ու զգացմունքն արտայայտել։

Ուրեմն թոյլ տուէք որ մանուկն երգէ, խօսի, որպէս զի իր առաջին լեզուն, բոլորովին արուեստական, զմայլելի և չվոխթ թոթովումի մը, զոր միայն մայրական լսելիքը լաւ կ'իմանայ, առաջնորդէ գինք հաւասով ճշմարիտ և ազգային լեզուին, գերազոյն գործի ընկերականութեան և քաղաքակրթութեան։

Վ.

ՈՒՐՈՒԱԳԻՐ ԳԻՏՈՒԹԻՒՆ*

20· Ջրէ կղեան հաճախական է ղանգուածին. — Այժմ նկատենք չէ թէ կշիռն ընդհանուր առմամբ, այլ ջրի կշիռն։ Կ'ըսեն թէ ջրալի բաժակ մ'աւելի ծանր է քան դատարկ բաժակ մը, վասն զի լի բաժակն երբ վեր առնենք մեծագոյն ճգան մը զգացնութիւնը կ'տայ մեզ քան դատարկը։ Որքան չատ լինի ջուրը բաժակին մէջ, նոյնքան մեծագոյն է ճիգը։ Ջրով լի դոյլ մ'աւելի չատ ճիգ կ'պահանջէ, թէև պարապ դոյլն լիովին թեթև եթէ։ Իսկ երբոր ջրալիր կարաս մը վերցնելու փորձ ընենք, անհնար կ'լինի մեզ չարժել զայն, թէև դատարկ կարասը գիւրին

* Տե'ս Նախամեր առնագիր, երես 401։

է բառնալ։ Ուրեմն այնպէս կ'թուի թէ ջրի զանգուածն որքան ետուար լինի նոյնքան աւելի կ'կշռէ, մինչդեռ որքան նուազ լինի զանգուածն, նոյնքան քիչ կ'կշռէ։ Բայց ջրի կաթիլ մ'երբ ափի մէջ թափի կարծես թէ բնաւ ծանրութիւն չունի։ Սակայն այս չկրնար լինիլ, վասն զի կաթիլը վար կ'ընկնի իսկոյն, և հետևապէս պարտի կշիռ ունենալ։ Բայց ասոր՝ մի քանի հազար կաթիլ կրնայ ընուլ բաժակն, և եթէ հազար կաթիլը ծանրութիւն մը ունի, մէն մի կաթիլ պարտի ունենալ այդ կշռոյն հազարորդ մասը։ Ուրեմն այս ճշմարիտ է որ մեր ըրած ճգան ղղացումն կշռի չատ կոչտ չափ մ'է, և չթողուր մեզ մանր կշիռներ բազդատել և ոչ իսկ ըմռռնել զանոնք երբ չատ թեթև են։ Ծանրութեան վրայ ճշդիւ դաղափար մ'ունենալու համար, պարտինք գործածել գործի մը, որ չինուած է յատկապէս կշիռները ճշդիւ չափելու։

21. Կշեռներու չափումն. — Կշռորդ. — Այս գործին է կշռորդն, զոր կարող ես տեսնել ամեն նպարավաճառի խանութը։ Ունի լծակ մ'որ դիւրաւ կ'չարժի միջէն հաստատուած առանցքի մը վրայ, և երկու նժար որ մէն մի ծայրը կցուած են։ Երբ երկու նժարները պարապ են, լծակն հորիզոնական դիրք մը կ'պահէ, բայց եթէ մի նժարին մէջ բան մը դնես, այդ նժարը վար կ'իջնէ, և միւսը վեր կ'ելնէ։ Արդ՝ եթէ պարապ նժարը ճեռքով վար մղես, լծակը վերտին հորիզոնական ուղղութիւն մը կ'առնու, և այդ ուղղութիւնը տալու համար պէտք եղած ճիգն այնքան մեծ պիտի լինի որքան որ միւս նժարին մէջ գտնուած ծանրութիւնը մեծ է։ Երբ ունկի մը դրուի մի նժարին մէջ դիւրաւ վեր կ'ելնէ, եթէ միւս նժարը մատով ճնշենք։ Լիտր մը աւելի ոյժ կ'պահանջէ, տաս լիտրի համար հարկ պիտի լինի բազուկը գործածել. յիսուն լիտր բառնալու համար չատ աւելի մեծ ճիգ պէտք պիտի լինի, իսկ երկու հարիւր լիտր ծանրութիւն մը չարժելու համար՝ ամենէ զօրաւոր ճնշումը պարապ նժարին վրայ անբաւական պիտի լինի։

Այժմ ենթադրէ թէ՝ փոխանակ վար քաշելու դատարկ նժարն, ծանր բան մը կ'դնես անոր մէջ։ Եթէ այդ բանին ծանրութիւնն միւս նժարին մէջ գտնուած մարմնոյն ծանրութեան հաւասար է, լծակն իսկոյն հորիզոնական դիրք մը պիտի առնայ։ Իրօք, մէն մի նժար դէպ ի երկրին կեդրոնը չարժելու մէ և նոյն ձգտումն ունի, և որովհետև և ոչ մին չէ կարող վար իջնել առանց միւսն վեր հանելու, փոխադարձաբար դիրքը կը-

չէզոքացնեն։ Մի և նոյն բանն է՝ եթէ երկու տղայք հաւասար ուժով դիրար քաշեն. ցորչափ իրարու ներհակ քարշումն հաւասար լինի, բնապէս տղոց և ոչ մին կ'շարժի. բայց եթէ միոյն ոյժը քիչ մ'աւելնայ միւսը դէտին կ'տապալի։

ՀՐՓՍԼԷՑ

ՏՆՏԵՍԱԴԻՏՈՒԹԻՒՆ*

Համբաւներէն և արհեստաւորաց ընկերութիւններ. — Երբեմն մի և նոյն արհեստի բանուորներ միակ դասեր կ'կազմէին, որու մէջ մուտ կ'ունէին միայն անոնք որ երկար ժամանակ կ'աշակերտէին և ծանր ու դժուարին փորձեր կ'կրէին։

Այսպէս այն գործատուրն որ դարբիններու դասին չէր պատկաներ, չէր կարող նիգ մը չինել։ Մենաշնորհ մ'էր այսինչ գործը կատարել։ Ամեն ոք ազատ էր նօթուեթենէ մեռնիլ, այլ ազատ չէր իր հացը ճարել իր դիտցած կերպովը։

Դիւրիօ 1776ի հրովարտակին մէջ կ'ըսէ. «Ամեն մարդու սեպհականութիւնն է աշխատելու իրաւունքն, առաջին, և ամենէ անկապտելի սեպհականութիւնն»։

Այսօր չկան համբաւներ, բայց ազատագրեալ բանուորներն տեսանելով որ տկար և անզօր են, վասն զի կղզիացած են, վերստին միացան իրենց արհեստակիցներուն հետ, առանց սակայն մասնաւոր արտօնութիւն մը վայելելու։

Այս արհեստաւորաց ընկերութիւններն բազմաթիւ անդամներուն յԱնգլիա և Ամերիկա, ուր Trades unions կ'կոչուին։ Շարաթական վճարում մ'ընելով՝ օգնութեան արկղ մը կ'կազմեն, և մերթ ընդ մերթ կ'դումարուին որպէս զի միահամուռ խորհրդակցին և շարժին՝ իրենց օրողչէքն բարձրացնել տալու մտօք։ Իրենց զէնքն են դաշնակցութիւնն և գործադուլն։

Դաշնակցութիւնք և գործադուլ. — ժամանակ առ ժամանակ բանուորները կ'ջանան օրողչէքի յաւելում մը ձեռք ձգել, դաշնակցելով և աշխատելու մերժելով, այսինքն գործադուլ ընելով՝ երբոր պահանջուած յաւելումն մերժուի։

* Տե'ս Սեպտեմբեր ամսագիրը, երես 398։

Ցաճախ կ'պատահին գործադուլներ Անգլիա — 2382 գործադուլ տաս տարուան մէջ (1870–1879) — վասն զի գործաւորներն գաշնակցական խոհքեր կազմած՝ ունին խնայողութեան արկղ մ'որուն միջոցաւ, ի հարկին, կ'հոգացուին գործադուլ ընողները։

Գործադուլը կ'կազմակերպի գործատան մը մէջ. իսկ ուրիշ գործարաններու մէջ բանուորները կ'շարունակեն իրենց աշխատութիւնն և անգործներու օրողչէք մը կ'վճարեն։ Ի վերջ՝ գործատէրը կ'ստիպուի դիջանիլ։

Այսպէս բանուորներու պահանջմանց ենթակայ չլինելու համար զատ զատ, գործատէրներն գործադուլին կ'պատասխանեն ֆոյճոփակ (lock ont) ընելով, այսինքն գործարանական աւեն աշխատութեան վերջ կ'տան, այնպէս որ բանուորներն չուտով կ'ըստիպուին հպատակիլ, վասն զի պայքարը շարունակելու համար դրամական միջոցներ չունին։

Գործադուլներն մեծ տառապանաց պատճառ կ'լինին, մանաւանդ բանուորներու մէջ։ Անգլիացի վիճակագիր մը Պ. Պիվան հաշուած է որ 112 գործադուլ նոյնքան միլիոն ոսկի օրողչէքի կորուստ պատճառած է։

Գործադուլներն օրողչէքի յաւելում կրնան բերել եթէ սընտեսական օրէնքն թոյլ տան, այսինքն՝ երբոր վաստակը չատ է։

Գործադուլի առաջն առնելու համար այժմ Անգլիոյ մէջ երկու միջոց կ'գործածեն.

ա) Իրաւախոհութիւն. վարպետներն ու բանուորներն ձեռնհաս իրաւարարի մը կ'յայտնեն իրենց պատճառներն, համաձայնութեամբ ընտրելով այդ իրաւարարն, որպէս զի վէճը լուծէ։

բ) Ապրանքին վաճառման գնոյն համեմատ որոշուած օրողչէքն. օրինակ, եթէ երկաթի գինն ելնէ կամ իջնէ, բանուորներու օրողչէքն որ երկաթը կ'արտադրեն, համեմատաբար կ'ելնէ կամ կ'իջնէ։

Դժբաղդաբար ասոնք և ուրիշ նմանները. — Տնտեսագէտները կ'ըսեն. բանուորներու վիճակը բարւոքելու միակ միջոցն է դրամագլուխն աւելցնել։ Դրամագլխի յաւելումն, եթէ բանուորներու թիւը չաւելնայ, օրողչէքն յաւելլու կ'նպաստէ։

Այս չատ ճշմարիտ է. բայց բաւական չէ։ Դրագլխի ազումն ունի վախճան մը և այդ վախճանին կարելի է հասնիլ։ Արդէն կ'ընդնշմարուի այդ ազումն, թէև աշխատութեան վարձքն տակաւին գոհացուցիչ չերևիր։

կարևորն այս է որ աւելցած դրամագլուխն, մեծ մասամբ, հարկ է որ անցնի նոյն իսկ բանուորներու ձեռքը՝ լաւ օրինակ օգնութեամբ և խնայողութեամբ։

Ի՛նչ հեգնութիւն, պիտի ըսեն ոմանք։ Խնայութիւն կ'քարոզէք անոնց որ, դուք ևս կ'խոստովանիք, չունին անհրաժեշտ պիտոյից համար դրամ։

Չունին անշուշտ, իրաւ է, և սակայն որքան դրամ կը վատնեն անպիտան ու աւելորդ բաներու համար, ինչպէս ալքոլն և ծխախոտը։

Եթէ գործաւորներն խնայէին միայն այն ահագին գումարներն զոր կ'վատնեն ոդելից ըմպելեաց համար, ըմպելիներ՝ որ պիրենք կ'անբանացնեն, քանի տարուան մէջ կարող պիտի լինէին դնել բոլոր այն գործարաններն որոց մէջ կ'աշխատին։ Այսպէս մի քանի առաքինութեանց, այս է՝ նախատեսութեան, ժուժկալութեան, չափաւորութեան կիրառութեամբն է որ ժողովուրդ մը կրնայ բարւոքել իր վիճակը։

Օրդնչէ յաւելուած և քաղաքագրութեան աճուռ. — Եթէ ժողովուրդն աւելի արագ բազմանայ քան դրամագլուխն, նա մանաւանդ ուտելիքն, ո՛և է վերանորոգում չէ կարող բարւոքել լիովին ամենէ աղքատ դասերու վիճակը, վասն զի արտադրութեան արդարագոյն բաշխումն անգամ գոհացուցիչ վարձատրութիւն մը չպիտի կարենայ հայթայթել գործաւորին։

Ուրեմն Ս. Միլ իրաւունք ունի ըսելու թէ քաղաքական տնտեսութեան մէջ բազմամարդութեան խնդիրն գեր ի վեր է քան ուրիշ ամեն խնդիր։

ԷՄ. ՏՔ ԼԱՎԼԷՅ

ՕՐՀՆԱՆՔ

ԱՐԱՐԱՏՅԻ ՏԵՐՈՒՆԻՆ *

Փառք քեզ Աստուած, փառք քեզ Աստուած, փառք ՔԵզ Աստուած. յաւիտեան ժամ փառք քեզ Աստուած.

* Վաղարշապատում մի հաբէթարանայ «Բոլոռվի Սաֆոյ» անունով ծեքառնու բերնէն լսած։

Խնայես ողորմաս մեզնից խեղճին անհատին
Մեզանից ողորմելուն ողորմաս, ընդուր
Սադաղից մեր մեղաւոր սեւերեսին:
Փառք քեզ Աստուած, փառք քեզ Աստուած, փառք քեզ Աստուած,
Երկիր աշխարհին դինջութիւն, խաղաղութիւն,
Հացին էժանութիւն, մանին բանկութիւն,
Թագաւորաց բազաւոր հաշտութիւն,
Մերոց արքայութիւն, չահել չեւանցներին
Արեւշատութիւն. խնայես ողորմաս,
Ազատես սատանից, փորձանքից
Խածիլ դազիլ գուլգուխխաղանից
Նիազ շառից անգգամից պատրաստ պահես,
Որ աշի կողմին արժանացնես:
Փառք քեզ Տեր Աստուած, պահես
Պահպանես մեր հոգին, որ խնամքով
Պահես որ ողորմութիամբը, խնայես
Մեզանից խեղճին, խնայես ողորմաս.
Մեղայ իմ Տեր մեղայ, որ սարսափից
Երկինք գետինք դողայ:
Սուրբ Կարապետ Մշեցի, Թադեոս
Առաքեալ Մակուեցի, Պօղոս Պետրոս
Ցրանկեցի ձեր տունն օրհնի, ձեր տեղն
Օրհնի, ձեր վարն օրհնի, ձեր վաստակն
Օրհնի, ձեր ժառանգն օրհնի:
Ինչպես օրհնի. — Անմահական
Գառի նըման, դրախտական ծառի
Նըման. Պըտղեն ուտէք անմահական
վէրի դառին արժանանաք:
Հոգւով խնդաս, սրտով խնդաս,
Ինչպես խնդաս. — Աստուծոյ բերնից ինչ որ
Դուրս գայ, այնպես խնդաս:
Մեղայ իմ Տեր մեղայ,
Որ սարսափեն երկինք գետինք կ'դողայ
Մեր վարպետաց, ձեր ծնողաց Տեր ողորմայ:

28 Փետրվար 1883 ամ. Հայոց

Ա.Ղ.Ջ.Ի.Կ, Ա.Ղ.Ջ.Ի.Կ*

Աղջի՛կ աղջի՛կ, սիրուն աղջիկ,
Քանց քո բուրդդ խորօտ աղջիկ.
Աղջի՛կ աղջի՛կ, քելրով աղջիկ,
Ինձ մաշեցիր բոցով աղջիկ:
Աչե՛ր աչե՛ր, թուխ թուխ աչեր,
Ի՛նչ սիրուն էք, ծառի աչեր.
Աչե՛ր աչե՛ր, փայլուն աչեր,
Ինձ այրեցիք վառ. վառ աչեր:
Աղջի՛կ աղջի՛կ, ճլվլաճ աղջիկ,
Այգու սոխակ ձայնով աղջիկ.
Ձայն տո՛ւ աղջի՛, ձայնիդ մատաղ
Ինձ արել ես դուռ քեզ նստաղ:

9 Հոկտեմբեր 83 ամ. Դ. ՀԱՑԸ

ՀՐԱԺԵՇՏ

1 Հայոց արեւ,
Ամ իմ բարեւ.
Անուշ արեւ,
Մրճաս բարեւ:
2 Լեռներ, ձորեր,
Դաշտ ճովիտներ.
Մրճաք բարով,
Հազար բարով:
3 Գետ աղբիւրներ,
Ու գով ջրեր.
Մճացիք բարով,
Երկար տարով:
4 Բարեաւ մրճաս,
Ա՛յ խաճ Արազ.
Ե՞րբ պիտի տաս,
Հայիս մուրազ:
5 Հայ եղբայրներ,
Բարեկամներ.
Հօր ու մօրով,
Մճացի՛ք բարով:
6 Արազած, Սիս,
Եւ դուռ Մասիս.
Բարով մրճաք,
Ինձ ջմոռնաք:
7 Դէ՛ն բոլորով
Մճացիք բարով.
Ես պիտ' մաշուիմ
Ձեր կարօտով:

8 Հոկտեմբեր 83 ամ. Դ. ՀԱՑԸ

* «Քելեմայ քելեմայ» ժողովրդական երգի նմանաձայնութեամբ և եղանակով»

Ա Ր Ե Կ

1 Իմ աղաւնեակ,
Անմեղ տատրակ.
Ինչ ծրտծտումես
կաքաւի պէս.
Ինչ վոյվոյում
Ու կանգատում:
2 Ա՛յ իմ հրեշտակ,
Երկնից եակ.
Աչեր վրճիտ
Ականակիտ.
Ինչ է փայլում
Քո աչերում:
3 Աստղիկ պայծառ,
Լուսնեակ կայտառ,
Դո՛ւ Արեւսեակ,
Իմ արեգակ.
Շողդ չոդչողդում
Ինչ է ցոլում:
4 Գեղեցկութիւն
Համեստութիւն
Պարկեշտութիւն
Անմեղութիւն
Ազնութիւն
Եւ բարութիւն:

Դիւրեմբեր 83 ամ.
Դ.

ՀԱՅԿ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պատրիարքական ընտրութեան բուռն պայքարն և բոլոր յարակից պարագաները տխուր ապացոյցներ մը թողած են դաւառաբնակ աղգայնոց վրայ: Մի քանի ամիսներէ ի վեր՝ մեր Ազգային ժողովն երկանց մէջ էր: Դաւառներն ահաբեկ ունկն կ'դնէին Գոսֆորի եղբէն հասած ահեղագոչ աղաղակներու, մրրկալի որոտումներու, վայրկենացոյց ապտակներու, և երկիւղած անհամբերու թեամբ կ'սպասէին տեսնել այն աստղն որ պիտի ծագէր այդ փոթորկէն և պիտի լուսաւորէր Հայոց աշխարհի սեւ համած երկինքը:

Վերջապէս ժողովն ծնաւ իր զաւակն, սակայն ո՛րքան ողբ ու կոծ, արտասուք ու հեծեծանք պատճառելով իր ջիլը, որ մօտէն տեսաւ մահուան ստուերները: կայ ծը-

նունդ որ զինք ծնողին նոր արև, նոր այժ ու կենդանու-
թիւն կ'բերէ, կայ՝ որ անոր մահուամին կեանք կ'առնէ՝
կամ ժամանակէն առաջ լոյս տեսնելով, կամ բուռն
գործողութեան մ'արդիւնքը լինելով։

Ա.րդ սոսկալի երկունքն երկրորդ անգամն է որ կ'կրէ
մեր Ազգային ժողովը՝ անսասո մնալով կենսապահիկ կա-
նոնաց, ինչպէս նաև դաս մը փորձ ու հմուտ բժիշկներու
հրահանգաց՝ որով կ'պատուիրէին բնական, սահմանա-
դրական օրինաց անթերի գործադրութեան անհրաժեշ-
տութիւնն և ազգային չահուց խորին դիտակցութիւնը։

Եւ սակայն եթէ ոչ դեռ ևս պատրանք՝ անհնարին
ցաւ և զարմանք կ'զգան դաւառացիք պատրիարքա-
կան մարտին ստացած տպաւորենակ երևոյթներուն առջև
և իրարու կ'հարցնեն. — Եթէ Ազմաչու Գեր. վանահայրն
քան ամեն եպիսկոպոս արժանաւորն էր, ինչու համար
առաջին քուէարկութեան ժամանակ՝ քուէները բաժ-
նուեցան Բարթուղիմէոս և Նար-Պէյ Սրբազաններու մէջ.
եթէ ժողովը Սահմանադրութիւնը կ'յարդէ, ինչու հա-
մար երկրորդ քուէարկութեան ժամանակ համեմատա-
կան ընտրելեաց վրայ ընտրութիւնը կատարելու տեղ,
ինչպես որ կ'պահանջէ Սահմանադրութիւնն, Նար-Պէյ
Սրբազանին դժկամէ և ապօրէն հրաժարեցը կ'նդունի,
այն Սրբազանին որ դուռ չմնաց որ չզարնէ, ատոր-
գրութիւն չմնաց որ չմուրայ, ընտրելեաց ցանկը մտնելու
և պատրիարք լինելու համար, Բարթուղիմէոս Սրբազա-
նին, որ 39 քուէ ստացած էր արդէն, կրնակը կ'դարձնէ
և նոր քանաչով մը նոր ընտրելի մը կ'առաջարկէ և կ'ըն-
արէ, ինչու համար, եթէ մեր երեսփոխանները համոզման
վրայ կ'գործեն, երկրորդ քուէարկութեան ժամանակ 39
քուէները կ'հալին. վերջապես եթէ կեդրոնն մեր դլուխն
է, Սահմանադրութեան ծննդավայրն է, օրինասիրու-
թեան, արդարասիրութեան և խաղաղասիրութեան տի-
պարն է, ինչու համար այդ կեդրոնն, որ խոստութեան,
հարազատ հայ քաղաքականութեան լուսատու չառա-
ւիղներ պարտի տրձակել մեր վրայ, նա մանաւանդ աղ-

դային հանգ իսաւոր դործողութեան մը, կենսական շա-
հուց տադնապալի ժամանակն, մի միայն ապօրինաւորու-
թեան, թեթեւամտութեան ու անյահ կրից օրինակ և հան-
դիսարան կ'դառնայ »։

Այս հարցումները կ'ընեն անշուշտ այն դաւառացի-
ներն որ տակաւին անդէտ են այն քաղաքական հոսան-
քին որ ծաղոմէն դուրս ազդային դործերը կ'դահավիժեն
դէպ ի անել ճահիճ մը։ Եւ այս հարցումներն պիտի ըս-
տանան իրենց պատասխաններն, երբ վնտռուին այն
դաղտնի թելերն որ կ'շարժեն մեր դաս մը դիւանագէտ-
ներու հոդին ու միտքն ազդային հանրօդուտ և ճշմարիտ
քաղաքականութեան սահմանէն դուրս։

Թերևս մօտալուտ ապագայ մ'երևան հանէ էական ֆոլ-
Ջէվ թէ՝ ոյք իրաւունք ունէին, անոնք որ սահմանա-
դրական օրինաց հաւատարիմ, անձնական և օտարոտի
նկատումներէ հեռի, ին· Գէորգեանին, Ա. Ալանեան Տաճ-
ճան փաշայի, Սուրէնեան էֆէնտիի պէս, կ'պաշտպանէին
այնքան ճարտարութեամբ և քաջատեղեակութեամբ ժողո-
վին արժանապատուութիւնն և ընտրական դործողու-
թեանց չարունակութիւնն համեմատականի վրայ, թէ ոչ
անոնք որ քաղաքագիտական նուրբ հաշիւներու համա-
ձայն, նման նուրբեան, նորատունկեան և Եուսուֆեան
էֆէնտիներու, այնքան չքնաղանութեամբ կ'յորդորէին
բնկանել սկսուած ընտրական գործողութիւն մը, և նոր-
ընտրել մը կ'առաջարկէին . . . ։

Հետևապէս՝ առ այժմ առելորդ կ'համարինք ծան-
րանալ արդէն ծանր և չատերուն ծանօթ իրողութեանց
վրայ, քանի որ ժամանակ նոր ընտրելին այսօր ընտրեալ է,
Թուրքիոյ Հայոց Պատրիարքն է, Ամեն· Տ· Խորէն Սրբա-
զան Աչըգեանն է, որ այնքան փառաշուք ցոյցերով եկած
նստած է իր պատրիարքական Աթոռն, և որ անշուշտ
այդ ցոյցերուն կարևորութիւնն չտալով՝ ձեռք պիտի զար-
նէ ազդային իշխանութեան ղեկն այնպես վարել որ նախ-
հին և նոր ապօրինութեանց և անիրաւութեանց մանկլա-
ւիկներն ու հեղինակներն ղպան իր հովուական արդարա-

դատ մականին ծանրութիւնը, ապա գինք ծնող ժողովը վերստանայ իր բարձր հեղինակութիւնն, յարգը, կեն-դանութիւնը, հաստատութիւնն և չնորհը։

Ահա այն ժամանակ նոր հաստատութիւն պիտի դանէ այն վարդապետութիւնն որ հակառակէն ճշմարտութիւն, ապօրինաւորութենէ օրինաւորութիւն, քաօսէն կարգ կանոն և փոթորիկէն խաղաղութիւն կ'յուսայ, և այն ժամանակ ևս, Ա.Ժ.Ն. Ա.ՐԴԵԱՆ Սրբազանն, որու անձն ու արժանիքը խնդրոյ տակ չեն, արդիւնապէս պիտի վարէ իր բարձր պաշտօնն, որ այնքան դժուարացած է նախորդ անիշխանական, հակադպային և հակաառհմանադրական արարմանց պատճառաւ։

Ուսան կարողութիւն, ոյժ և չարաչուք աղդեցութենանց ներդործութենէ միշտ անվտանգ և աղատ ճիշդ մաղթելով՝ սրտագին կ'չնորհաւորենք նորընտիր Ա.Ժ.Ն. Սրբազան Պատրիարքին բարձր պաշտօնը։

Ա.ՆԱԿՆԿԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Ինչ որ խորհին ու խօսին, այլ ևս կատարուած իրողութիւն մ'է թէ՝ Արմաշու վանահայրն այսօր Թուրքիոյ Հայոց ՊԱՏՐԻԱՐՔՆ է։ Մօտ 40 երեսփոխանները չուղեցին սպորագրել այդ մազաղաթան, որ Ազգային ժողովոյ կողմէ կ'մատուցուի առ Օսմանեան կառավարութիւնն, և հաւաքական աղդու բողոք մը մատուցին առ Գեր. Տեղապահն, ընդդէմ այս պատրիարքական ընտրութեան ապատահմանադրական եղանակին, զոր ի զուր այնքան կորովի և անհերքելի փաստերով ու ոճով յատենի ժողովոյ և ի լրագիրս բացատրեցին Վ.Սեմ. Ստեփան փաշա Ալեանեան և հանճարեղն Ա.Ր. Պէրպէրեան էֆէնտի ու հէրքիւլեան լսատով հարուածեցին հակառակորդ կուսակցութեան հիմրան՝ ցվերջին գլուխն, որ պանդխտեան պատճ մ'է Ա.Ժ.Ն. Սրբազնէն պարգեւեալ։

Վեհափառ Սուլթանն նորընտիր Պատրիարքը վաւերացընող իրաւունքն՝ յական քթթել, արձակեց, որով Պօլսէն պաշտօնական մեծաթափօր պատգամաւորութիւնք ցամաքէն՝ պնդադեսպան և ջոգեպինդ արձակուեցան, ձովվ ֆեճաղինք ի Պօլիս բերելու համար նորընտիր Ամեն. Պատրիարքը, զոր հանդիսաւոր ընդունելու համար՝ յեզր Մախոռեսի այն չոգենաւուն որ բարեհանձ կառավարութեան կողմէ՝ ի պատիւ Ազգին, յատկացուած է։ Առաջնակարգ վաճառականաց պաշտօնական մասնախումբ մի ևս կարգուած է ընդենաւէն ուղղակի ու անխոտոր ի Պատրիարքարան կառարչաւ և ձիարչաւ առաջնորդելու համար Նորընտիր Ս. Պատրիարքը, որ ներկայութիւնն Ադամեանի Օթելլական ներկայացումներէն աւելի պիտի ոգևորէ նորատէր, տեսանելով և հանդիսանդիր Պօլսեցիներս, որոց չատը անդէտ է թէ այդ մեծաթափօր պատգամաւորութիւնք դժուարաւ կատարուած 4—500 ոսկւոյ ազգային ֆոխտոռնեմէն է որ տեղի կ'ուննենան։ Ամեն. Ս. Պատրիարքն Պատրիարքարան հասնելէն և հոն իւր հքեղ պարուհաց հետ մեծարուելէն ետև՝ նոյն մեծադղրդ հանդիսիւ կ'ընթանայ ի Բ. Դուռն իւր և Ազգին շնորհակալ և երախտագէտ զգացումներ մատուցանել առ ոտս Գահոյից Վեհափառ Սուլթանին և Նախարարաց. ապա նոյն չքով կ'վերադառնայ անտի, կ'իջնէ ի Մայր Եկեղեցի, հանդիսաւոր օրհնան անդ կատարելու համար ի վերայ ճեռնադրելի Ազգ. Սահմանադրութեան և անոր անշրջաբ պահպանութեան։

Թէև իրրև թղթակից՝ պաշտօնս է միայն պատրիարքական ընտրութեան պաշտարին երևոյթները դծել ու անցնիլ, ուշիմ ընթերցողին թողլով եզրակացութիւններ հանել, բայց ըստ ոտրում չատեր համեմատականի խնդրոյն նկատմամբ յատնելիք ընդհանուր ծողովոյ ծագած ջերմ վիճաբանութեանց տեղեակ են, բաւական կ'համարիմ ակ ի բերել նաև այն գաղտնիքն որ մեզի անակնկալ Պատրիարք մը սլիտի տար։ Երբ օտարի պաշտօնեայ մը՝ Ն... էֆէնտի կ'իմանայ թէ Պրուսայի Գեր. Առաջնորդն և Գէչիկճաչի Գեր. Բարոպիչն դէմ առ դէմ համեմատականի մնացեր են, դուշեր է. — «Մենք այդ ընտրութիւնը թեկանել սլիտի տանք և հաւանական Պատրիարքն, որ է Բարթուղիմէոս, չսլիտի ընտրել տանք»։ Եւ իրօք այնպէս եղաւ։ Ահա այն ջրին պատճառն որոյ արդիւնքն եղեն Նառ-Պէյի յընտրելութենէ հեռացուած, Նուրհանի ապտահոտ, բանալիէ փոքրնոտ, երեսփոխանաց մեծ մասին ոչխարային հլուդիւնն, 39 քուէից հալուածո

թ՛ող Աբէլէի, ըստ կարդալոսի, արձակած չեփորային չրինդ-
ներն ընդդէմ Բարթուղիմէոսի։ Ահա այսպէս կ՛չարունակուի
այն քաղաքականութիւնն որ բռչոռականին հաստատուելէն ի
վեր էջմիածնի վեհարանին մէջ խարիսխ նետեց։ Այդ քաղա-
քականութիւնն, ինչպէս կ՛ըսէր երբեմն Աղաբէգեան Մ. Էֆէն-
տի, տեսակ մ՛ուռկան է, որու մէջ կ՛բռնուին մեծ ու փոքր
ձկներ, առանց գիտնալու որ բռնուած են . . . . Եւ սակայն այդ
որսացեալ ձկները՝ գիտնալ կ՛կարծեն ինչ որ կ՛ընեն և չեզբնդրէ
պատմառներու դիմելէ զատ՝ ձգտմտանքամբ կ՛պարծին։ Է՛հ,
Սոկրատը թունաւորող, Արիստիտէսն աքսորող, Ցիսուսը խա-
չող, Գալիլէն դատապարտող ժողովն ալ ձգտմտանքէն մ՛էր։

* * *

Սակայն այսօր Ամեն. Աչըդեան Սրբազանի ընտրութեան ե-
ղանակին ազօրինաւորութիւնը ցոյց տալով հանդերձ, պարտիմ
ըսել որ Նա Թուրքիոյ Հայոց Պատրիարքն է։ Կ՛համարձակիմ
սա խորհուրդը տալ որ չանայ նախ՝ ազգային ներքին-կուսակցա-
կան պատահումները բառնալ, դի պատերազմայ զան զամե-
նեսին ալեկոծելէ նէրէն պատերազմն է. երկրորդ՝ երես չտալ
քղանցալէզ մարդելոյզներու և ականջ չկախել քսու լեզուներ-
րու։ Դիւրին է Պատրիարք ընտրուիլն, այլ խնդիրն հանրաչահ
Պատրիարքութիւն դիտնալն, կարենալն ու ընելն է։ Ինչ որ յա-
ճախ ի վերջոյականէն կարելի կ՛դատինք, ի գործնականէն ստէպ ան-
հնարին կ՛լինի։ Իրաւ է թէ Աբէլէի, որ ազգային մասիոյ սեռնա-
վաճառութիւնը քիչ առնէն պիտի կորնցնէ, է յոյս անտի
ապերջանիկ եղած փրոցուտոյց ֆրաչերոն Ամեն. Աչըդեանի նոր-
ընտիր պատրիարքութիւնն ամէն ամէ և աստղէ յաստղ պիտի
հանէ իրրև իրեն Կոպիտոլեան յաղթանակը համարելով զայն,
որպէս ըրաւ, երեք տարի առաջ, վեհապետեանինը, թէև յե-
տոյ իրրև անպէտն Պատրիարք նշաւակեց։ Սակայն պապրիչոփով
ուռուցիկ տողեր կարդալէ աւելի պապրիչոփավաչել դործեր տես-
նել կ՛ուզէ Ազգը։ Ուստի աւելորդ չեմ համարիր աստ գետե-
ղել այն ծրագիրն, զոր անտարակոյս ընդունելէ, Բարթուղիմէոս
Սրբազան պիտի գործադրէր, եթէ ինք լինէր Պատրիարք։ Այս
ծրագրին կարևոր կէտերը պիտի լինէին,

ա) Ցրուել Պետական կասկածներ որով ժամանակէ մ՛ի վեր
կ՛նկատուին ազգային հաստատութիւններ, բառնալ ազգային
անվստահութիւնը, և կարևոր գաւառաց հովիւներն, որոց

ոմանք վտարանդի կ'թափառին աստ, և այլք կ'դժկամակին դնալ ի հովուութիւն, լիազօր վստահութեամբ զօրացուցած վերադարձնել իւրեանց առաջնորդ ատեղին, ուր նոցա բացակայութիւնն կրօնական մարդոցաց բաց դռներ թողած է։

բ) Ազգային առանձնաշնորհումներն միանգամ առ միշտ անկապտելի պահել և աւելի հաստատուն վիճակի մէջ դնել։

գ) Կաթողիկոսական ընտրութեան Թուրքիոյ Հայոց մասնակցելու եղանակն որոշել, Արարատեան Աթոռին եկեղեցական անկախութիւնն ապահովել, ՊալՃէնէկան ի սպառ մերժել և քաջաւական կաթողիկոսներ ունենալու աղէտէն Ազգը փրկել։

դ) Կրօնափոխական չարժմանց պատճառներու քննութիւնն և անոնց առաջն առնելու միջոցներու անօրէնութիւնն ընել։

ե) Գաւառաց Առաջնորդներն և անոնց պաշտօնական յարաբերութիւններն այնպիսի վիճակի մէջ դնել, որ ո՛և է գաւառ ոչ անառաջնորդ մնայ և ոչ Առաջնորդն կասկածանաց և զրպարտութեանց ենթարկուելով՝ զոհուի։

զ) Պարտաւորել ամեն Առաջնորդ, որ ոչ միայն իր թեմի յետին գիւղին կամ աւանին մէջ բաւական կոկիկ և կանոնաւոր եկեղեցի ու երկսեռ դպրոց ունենայ, այլ և գաւառագլխոյն մէջ ունենայ իւր տրամադրութեան ներքև մէկ կամ աւելի վարդապետ, պարբերաբար և միշտ հսկելու համար բոլոր գաւառի հոգևոր և աշխարհին գործերու վրայ։

է) Վանական հաստատութիւններն յօգուտ կրթութեան արդիւնաւորելու միջոցները խորհիլ ու գործադրել, և անոնց մէջ տիրած զեղծումներն ի սպառ ջնջել։

ը) Ապակեղրոնացման դրութիւնն քաջալերել և Ազգին նիւթական և մտաւորական ոյժերն հաւաքապէս գործել տալու ջանալ։ յատկապէս կեդրոնին վարչային, տնտեսական, ելմտական և կրթական խնդիրներն յօգուտ Ազգին լուծելով եւն եւն։

Այս կարի զեղչեալ ծրագիրն Բարձրագիտէնեան կուսակցութեան՝ վասն ազգային վարդապետման և բարւոքման նախանձայուզութեան, տածած զգացմանց և մտածմանց իբրև մի փոքր նմոյշն կ'ներկայացնեմ Ազգին, առ այն հրաւիրելով նաև ամենչուչա Ներընտիր Ս. Պատրիարքին խորին և ուշիմ ուշադրութիւնն։

Կ. Պոլիս, 20 Հոկտեմբեր 1883։ ՕՇԻՆ

ԵՐԵՔ ՏԱՌԵՐ

Մեր մայրենի
Տառերն՝ ո՛րքա՜ի
Են սիրելի։

Այո՛, սակայն
Նոցա երեք
Հատը միայն

Ես առաւել
Անճկաւ սիրեմ
Կարդալ, լրսել . . . :

(Ս) գիրը այն
Նախ եւ յառաջ,
Լուռ մեղմաձայն

(Է) տառն յետոյ,
Եւ (Ր)ն բա՛րբ
Վերջ ի վերջոյ . . .

Բայց ահմեկիկն՝
Անմիտ գուցի՛
Սոքա թրւիցն . . .

Մեծահատոր
Մատեաններ Լ.ն
Խորհրդաւոր .

Սոցա ա՛ղե
Ծրնած բառն իմն
Գաշտելի է .

Այն խորագիր
Ոսկեբանդակ
Ո՛ւրմատաւոր

Պիտի մրնայ
Տրրտմաթախիծ
Սրրտիս վրրայ՝

Ցո՛րջափ խաղաց
Սորա թրրթռուն
Թելերն արեան :

Ալէքսոպոլ, 3 Մայիս 1888։

ՓԷՍՊԻ

ԿՈՎԿԱՍԻՆ ՆԱՄԱԿ

Երբ Ռուսիայի արտաքին գործերի մինիստրի եղբայրն Պ. Դիվոնը, Ս. Էջմիածին ուղևորեցաւ Էջմիածնի և Ռուս կառավարութեան միջև ծագած ինչ ինչ տարաձայնութիւններին վերջ դնելու նպատակով, աւևն կողմերից էլ մի տեսակ շուխ էր լսւ-

ւում, թէ Մակար Յարընտիրը պայքարի մէջ է իւր բարերար կառավարութեան դէմ: Գանուեցան նոյն իսկ թերահաւատներ որոնք սկսան ղէջալ իրենց յանցանքը, պատրաստուելով յարդանօք իրենց գլուխը խոնարհեցնել Յարընտրի առաջ. . . . . : Սակայն լեռը երկունքի մէջ էր և ծնաւ . . . : Օրմանեան Սրբազանի հեռացումն էջմիածնից: Մինչև այժմ դեռ կարծիքներ կային, թէ Յարընտիրը ծածկում է դործը՝ որպէս զի մի անդամին ալևատհ զարմացնէ: Բայց խնդիրը շատ պարզ է: — Որովհետև Մակարի կաթողիկոսացումն կատարուեց Հայ ազդի կամքին հակառակ և մանաւանդ որ Կովկասի կառավարութիւնն ու իւր պաշտօնեաները Եանովքին և միւսները անդադար անյագատ զեկուցումներ էին անում կառավարութեան՝ Հայ ազդի նկատմամբ, ի նկատի առնելով և այն հանդամանքը, որ Կովկասում հայ ուսումնարանների փակուիլը, հայ ժողովրդից դինուոր վերցնելը, պետական ուսումնարաններում հայ մանուկներին Հայաստանեայց Եկեղեցու կրօնն ուսուցանելու հրամանը, Երևանի և այլ տեղերի Հայերից նշանաւոր և ազդեցիկ անձերին աքսոր ուղարկելը, — այս բոլորը միասին կառավարութեան բարձրագոյն կառավարիչ ատեանների մէջ կասկած է ծնեցնում Հայ ազդի նկատմամբ: Այդ կասկածն աւելանում էր նա մանաւանդ այն պատճառով որ մինչև անգամ ինքը՝ Յարընտիրն էլ միւս կողմից ազաչում էր, որ պետական ուսումնարաններում հայ կրօնը թոյլ տան հայերէն ուսանդելու՝ մատնացոյց անելով այն հանդամանքի վրայ, որ իւր նշանակութիւնը բոլորովին ընկնում է ժողովրդի առաջ և վերջապէս Օրմանեան Սրբազանին էջմիածնից հեռացնելու վերաբերմամբ եղած դիմադրութիւնը Թուս կառավարութեան կարծելու աւելի թէ այդ դրութիւնը շատ վտանգաւոր է և լարուած: Եւ ահա իրերի իսկական դրութեան մասին մի միտք գաղափար կազմելու և Յարընտրի դիմադրութեան հետ մօտից ծանօթանալու համար ուղարկուեց Պ. Գիրսը յատուկ յանձնարարականով. . . : Գիրսը տեսաւ, որ ոչ ինչ վտանգ չկայ և Յարընտրի վերաբերմամբ չրջող լուրերը, թէ մտադիր է անձամբ գանգատներ մատուցանելու Թուատոյ կայսրին՝ երբ Կովկաս ուղևորի կայսրը, բոլորովին անհիմն են . . . : Այնուհետև խաղաղեց նորանով, որ Սրբազան Օրմանեանցը հեռացաւ, — որին, ի դէպ ասենք, ինքը Յարընտիրն էլ արդէն մտածում է եղել հեռացնել էջմիածնից մի քանի յոգեկան նկատումներով, — և Գիսրդեան Ձեմարանի

ուսման ծրագիրը ներկայացուեց կառավարութեան՝ հաստատութեան համար . . . :

Սակայն ժողովրդի մէջ դեռ չրջում էր, և նոյն իսկ ինձ, զարդացած չրջաններումն էլ հաւատում էին այն լուրերին, որ Յարընտիրը պէտք է, եթէ ոչ քանգապանէ անէ Ռուսիայի Յարին իւր նեղ դրութեան, Իչխան Դոնդուկով–Կօրսակովի, Եանովսկու, և այլ Հայ ազգի նեղիչների դէմ, գէթ մի քանի նշանաւոր խնդիրներ պիտի ներկայացնէ Կայսրին՝ աղաչելով նրանց իրագործումը: Իսկ կարևոր խնդիրներ, ինչպէս դիտէք, շատ կան. այսպէս օրինակ վանքապատկան կալուածների խընդիրը, որ հարիւրաւոր վիճռների դործ է, հայ ուսումնարանների խնդիրը՝ որ Ռուսահայոց մահու և կեանքի խնդիրն է . . . և այլն և այլն, լեգիան է դրանց թիւը: Բանի մօտենում էր Կայսրի ուղևորութեան օրը դէպ ի Կովկաս, այնքան աւելանում էր ընդհանուրի հետաքրքրութիւնը. «Կառավարութեան ընարածն է». «աւելի իրաւունք ունի պահանջներ անելու խընդիրների մասով». «անչուշտ ի կատարուին նորա խնդիրները . . . .» լսւում էր չորս կողմից: Յոյսը մեծ էր:

Լեռն երկունքի մէջ էր և ծնաւ . . . : Սակայն ինքնեքդ տեսէք թէ ինչ ծնաւ:

* * *

Կարծելով, որ Ռուսիայի Կայսրի դէպ ի Կովկաս արած ուղևորութեան մասին տեղեկութիւնները չեն կարող հետաքրքրել պատուական «Ար. Մամուլ»ի ըրթերցողներին, զանց եմ առնում, և անմիջապէս անցնելու եմ մեզ աւելի հետաքրքրող խընդրին:

Սեպտեմբերի 28ին Կայսրը, Կայսրուհին, Թառանդը և Մեծ Իչխան Գէօրգի Ալէքսանդրովիչը ժամանեցին Թիֆլիս՝ Վլատիկավկազ–Նօվօրօսեյսկ–Նոր–Ախտն–Պաթում–Միխայլօվսկի վրայով Թիֆլիս, ուր ընդունելութիւնը շատ վսեմաւոր էր: Քաղաքը զարդարուած էր շատ գեղ, ժողովուրդը անհամար բազմութեամբ խռնուած էր ամեն տեղ: Սակայն ոստիկանական ամենախիստ հսկողութիւնն, որ աւելորդ էր, պակաս չէր ոչ մի տեղին: Պետերպուրգից եկել էին յատուկ ոստիկանների ամբողջ բանակ, ժանտարմ . . . թիւ չկար: Ամեն դասակարգ ոտքի վրայ էր: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ ոստիկանական խստութիւններն միայն առաջին օրն էին տեղի ունենում, ինչ-

գեռ միւս երկու օրը կայսերական ընտանիքը համարեա թէ առ-
զատ էր ընթանում։ Առաջին օրը կայսրի գոյնը թոռած էր և կառքը
արարչաւ էր ընթանում, վինչդեռ միւս երկու օրեր չափազանց
ուրախ էր երեւում։ Կռվիսսը շատ լաւ տպաւորութիւն գործեց
Կայսրի և նորա դերդաստանի վրայ . . . ։ Բայց ես հեռանում
եմ խնդրից։ Եւ սիրտ պատուեմ Յարընտրի ներկայանալը Յա-
յրին։

Յարն իր ժամանած օրն այցելութիւններ ընդունեց։ Այցե-
լութիւնները նշանակուած էին ժամը 2ին։ Յարընտիրը պէտք է
ներկայանար $2\frac{3}{4}$ին և սիրտ մնար մինչև ժամը 3։ Սակայն ժա-
մը $2\frac{1}{2}$ին նա արդէն պալատումն էր Գեր. Թագէոս Զիւնական
արքեպիսկոպոսին, և Գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղաւիրեանէ
ընկերակցութեամբ, որոնք Ս. Էջմիածնից էին եկած Մակար
Սրբազանի հետ։ Բայց ի այդ՝ Մակարին ուղեկից էր և Թեոփիլ
Գեր. Առաջնորդ Արիստակէսը, Յարընտրի պատուազանակիր Սա-
հակ վարդապետ Խաղատարեանցը և մի քանի քահանայներ։
Ի հարկէ կաթոլիկոսական շքերներն ալ անպակաս էին իրենց
վարմիր զգեստով և կարմրագագաթ սպիտակ մորթէ փափա-
խով՝ ձեռներնին բռնած արծաթազլուխ գաւազաններ։ Կայս-
րըն ամենից առաջ ընդունել է Պարսից Շահի կողմից եկած ար-
տակարգ դեսպան Չիսամ-ուս-Սլթանային, որ Շահի հօրեղ-
քօրորդի էն է։ Այնուհետև ընդունում է Յարընտրին՝ Գեր. Թա-
գէոս և Գրիգոր Սրբազանների հետ. իսկ Գեր. Արիստակէս և
Արժ. Սահակ վարդապետը մնում են ընդհանուր ընդունարա-
նում, թէև Յարընտիրը կանխաւրէն բանակցութիւններ սկսած
է եղել նրանց ևս իւր հետ Կայսրին ներկայացնելու, բայց այդ
չէ յաջողած։ Կայսրը և Կայսրուհին կանգնած են սենեկին մէջ
տեղը. մերոնք մտնում են ներս և խոնարհ գլուխ տալիս. Կայս-
րը մօտենում է և Յարընտրի աջն առնում համբուրում. Յար-
ընտիրը փոխադարձաբար առնում է Կայսրի աջը՝ նախապէս
ճակատն ևս համբուրելով։ Կայսրը հրաւիրում է Կայսրուհուն
նոյնն անելու։ Յարընտիրն և Յարիցան փոխադարձաբար իրա-
րու աջերն են համբուրում։ Այնուհետև Մակար Սրբազանը,
հայերէն ի հարկէ, ասում է մի ուղերձ, մի բարի գալուստեան
մաղթանք, որ անմիջապէս թարգմանում է Գեր. Աղաւիրեան։
Դրանից յետոյ՝ Կայսրը հարցնում է Մակար Սրբազանի առող-
ջութիւնը և թէ չունի արդեօք վիշտ, ուրիշ խօսքով, խնդիրներ
ունի՞ ասելու։ Ահա պատեհ առիթը, որից չէիք օգտւում է

Յարընտիրը: Նա թէև իւր խնդիրը դրաւոր պատրաստ ունենում է իւր դրպանում, բայց կայսրի ցոյց տուած վերին ասճանի քաղաքավարի, հեզահամբոյր և քաղցր վարմունքը չփութեցնում է նորան, որ երբէք այսպիսի քաղցր ընդունելութիւն ակնկալելու չէ եղել, և նա, փոխանակ իւր դրաւոր խնդիրը ներկայացնելու, սկսում է բերանացի խնդրել, աղերսել... ինչ... նա խնդրում է, որ պետական ուսումնարաններում հայ կրօնը հայ մանուկներին հայերէն ուսցնեն: Կայսրը պատասխանել է, թէ ինքն արդէն ծանօթ է այդ խնդրին, կառավարութեան և նիժնի-ի մէջ եղած բանակցութիւններից, և թէ արդէն ինչ որ հարկաւորն է, տնօրինած է, այժմ էլ նոյնը կըհրամայէ իշխան Դոնդուկով-Կորսակովին: Թէև կայսրի պատասխանն անորոշ է, բայց Մակար Սրբազանն իրեն եօթերորդ երկնքումն է զգում և յայտնում հաղարաբերան շնորհակալիք: Խնդիրը սրանով վերջանում է... Այնքան կենսական խընդիրներ ունինք, և ոչ մինի մասին և ոչ մի հեռաւոր ակնարկութիւն: Մակար կարծում է, թէ արդէն իւր խնդիրը չատ մեծ ու սարսափելի բան է: «Գնացէք այսուհետև, պատմեցէք ամեն տեղ, թէ ինչպէս ընդունեց մեզ կայսրը: Պատմեցէք նաև այն, թէ ինչպէս ես վերջապէս դիջայ երիտասարդների ճայնին և խնդիրը արի... Ասացէք ամենքին էլ, որ Ռուսիայի հզօր կայսրի կամքն էր իւր դպրոցների միջից վերցնել հայ կրօնը, որ լիովին իրաւունք ունի, և ես խնդրեցի չանել այդ...»: Գոնէ այդպիսի մի չնչին խնդիր անելուց յետոյ (թէև իսկապէս չարժեր մի միայն այդ անել մի կայսրի՝ որ 100,000,000 ժողովուրդների տէր է և իշխան...) խնդրած լինէր, որ արքունի դպրոցներում հայ կրօնի և Հայոց լեզուի ուսուցիչներին ինքը կամ թեմակալը նշանակելու իրաւունք ունենայ: Ապա թէ ոչ, կարծես կարելի չէ թողնել հայ կրօնի հայերէն աւանդումը լոկ անուանական եղանակով, ինչպէս որ իսկապէս լինում է այժմ*:

* Այսպէս օրինակ՝ Թիֆլիսի տղերաց պրոգիմնազիօնում Հայոց լեզուի ուսուցիչ ոմն Ադիւճեան, որ աւանդել է Ներսիսեան դպրոցը և յետևալ պրոգիմնազիօնում մի և նոյն ժամանակ ուրիշ պաշտօն էլ ունի, հայ լեզուի դասերը Թարգմանել է տալիս ռուսերին, հայերէն կարդալ է տալիս, և կարդացածը ռուսերէն պատմել և գրել տեխպում է աշակերտներին: Վարդանանց և Ս. Լուսաւորչի տօներին, նստեցնում և դաս պարապեցնում աշակերտներին և այլն: Կամ նոյն ուսումնարանի ռուս կրօնուսոյցը հայ աշակերտներին տեխպում է դասարանում առաջին կարգում նստել, լսել իւր դասը, նկարել Պաղեստինը և այլն և այլն:

Սակայն չարունակեմ՝ թէև հետաքրքրաշարժ ոչ ինչ կայ։ Կայսրուհին նստում է դահլիճի վրայ. նրա կոշիկին բազմաթոռի վրայ նստում է կայսրը. իսկ նրա ղէմ առ ղէմ Յարընտիրը. եպիսկոպոսները, ինչպէս որ վայել է, կանգնած են մնում։ Կայսրը հարցնում է Մակար Սրբազանին, Թադէոս և Գրիգոր եպիսկոպոսներից առանձին, առանձին նրանց կենսագրութիւնից տեղեկութիւններ։ Ի միջի այլոց չեշտակի հարց է առաջարկում Գեր. Գրիգոր Եպիսկոպոսին թէ «Դորպատի համալսարանն ունի՞ ձեր ուսումը»։ «Այո՛, Ձերդ Մեծութիւն» պատասխան է լինում Նրան. «ինչի՞ անպատճառ Դորպատ դնացիք»։ «Լաղարեանց ճեմարանն աւարտելով, բարեբարն այդպէս ցանկացաւ»։ Այս փոքրիկ խօսակցութիւնը միջ թերի, որովհետև այդ տեղից կ'երևի, թէ Թուսիայի Կայսրը ինչ աչքով է նայում Դորպատի Համալսարանի վրայ, որը թէև այն երկար տարիներ է որ ռուսական համալսարան է կոչւում, բայց մնացել է դուռ դերմանական համալսարան։ Մի քանի անկարևոր հարց ու պատասխաններից յետոյ՝ կայսրը և կայսրուհին բարձրանում տեղերից և կրկին առաջուայ կարգաւ առնում են Մակար Սրբազանի աջը և վոխադարձ։ Թադէոս Սրբազան ևս համբուրում է կայսրի աջը։ Այնուհետև առաջնորդւում են դէպ ի ժառանգի ընդունարանը։ Ժառանգը կանգնած է լինում դրան միջ և համբուրում է Յարընտիրի աջը. իսկ Յարընտիրը՝ նրա ճակատը։ Մի քանի աննշան հարց ու պատասխաններից յետոյ՝ Թագաժառանգը յայտնում է, որ ինքը ցանկանում է դնալ էջմիածին, տեսնել այդ Սրբավայրը։ ։ ։ «Փութացրէք, լանդրում եմ, Ձեր օրհնաբեր գալուստը, Ձերդ Բարձրութիւն, որպէս զի տեսնեմ իմ աչքերով այդ բազում սրութիւն էլ, որովհետև ծեր եմ» ։ Յետոյ վերադարձան տուն։

* * *

Սկզբան մոռացայ յիշելու, որ երբ Յարընտիրը դնում է Պալատ, և ահա ժպիտն երեսին և քաղցրութեամբ դիմաւորում է Իշխան Դոնդուկով–Կորսակովը և ասում է. «Ձերդ Սրբութիւն, ես բազում աւոր եմ համարում ինձ, որ պիտի ասիթ ունենամ Ձեզ ներկայացնելու Կայսրին, և ուրախ եմ, որ Ձեզ տեսնում եմ կայտառ ու առողջ (դրանից աւելի ինչ կօգնի Աստ կարելի էր ասել Մակարին ։ ։ ։)։ Մինչև այժմ ցաւում եմ, որ մեր միջ տարաձայնութիւններ ծագեցան, սակայն յոյս ունիմ,

որ այսուհետև ամեն բան լաւ կ'դնայ»։ Իշխան Դոնդուկովի այդ խօսքերից արդէն կարելի էր եզրակացնել, որ նա վախենում էր, չլինի թէ Մակարը իւր դէմ գանգատներ ներկայացնէ Կայսրին։ Խեղճը չէր իմանում, որ Մակարն ինքն էր մի կերպ աշխատում, որ Դոնդուկովի բարեհամ ուշադրութիւնը գրաւէ։ Մակարն ուրախանում է առիթից և առաջին աջողութեան նշան է համարում այդ իրեն համար։

Սեպտեմբերի 30ին պալատում ճաշ կար սարքուած, որին հրաւիրուած էին և Ցարընտիրն ու իւր ուղեկիցները, բայց օրն ուրբաթ լինելով, խեղճերը մնում են արքայական սեղանին անմասն։ Պատմում են, որ Աղափիրեան Սրբազանը ճաշի վրայ ուզել է խօսիլ և խօսել է . . . լինչ, Աստուած դիտէ թէ լինչ։ Իրենք էլ ամաչում են պատմելու, միայն այսքանս յայտնի է, որ նոյն իսկ Ցարընտիրը չափազանց դժգոհ է մնացել նրանից։ Պէտք է այս առթիւ ասել, որ Մակարը շատ անաջող ընտրութիւն էր արել իւր վեր վերցնելով Թաղէոս և Գրիգոր եպիսկոպոսներին. առաջինը միամիտ, անտաշ, կոպիտ, աշխարքից քէխաբէ մէկն է, իսկ միւսը՝ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցը, թէև համալսարանաւարի, բայց արդէն համարեա թէ կիսացնոր մի անձն է. նաև ոչ խօսածն է իմանում և ոչ խօսելիքը. սաստում է մի բան, կիսատ թողնում, խօսած տեղը քնում. . . և մի և նոյն ժամանակ էլ տարօրինակ արբեցող է. նոյն իսկ Կայսրի մօտ արբած է գնացել, այնպէս որ չէ համբուրել Կայսրի կամ Կայսրուհու ձեռքերը, որոնք օծեալ են համարւում, մինչդեռ Փառանգին ներկայանալով՝ համբուրում է նրա ձեռքը, որ օծեալ չէ և դեռ պատանեակ է տղերիկ։

Ճշմարիտ է, թէև չունինք կարգին հոգևոր մարդիկ, բայց և այնպէս կարելի էր եղածների մէջ ընտրութիւն անել։ Սուրբ Նահան Գեր. եպիսկոպոսը թէ՛ արտաքուստ՝ դէղեցիկ, հանակրելի անձն է և թէ՛ ներքուստ, մտաւոր կարողութեամբ։ Գեր. Սուրբէնեան Սրբազանը վլատիկավկազում, որ իր թեմն է, ընդառաջել է Նոցին Մեծութիւններին և արժանացել է սիրալիր ընդունելութեան. հրաւիրուել է նաև արքայական ճաշին։ Նորին Սրբազնութիւնը շատ լաւ տպաւորութիւն է արել կայսերական գերդաստանի անդամների վրայ։ Ինչպէս գիտէք, Արժ. Խորէն վարդապետ Մաքսիանէն մեր Ռուսահայերի մէջ միակ ճարտար և գրաւիչ քարոզողն է և կենդանութեան հրով հասարակութեան ճարակելու երկնառաք ընդունակութեան տէր մարդ է։

Իսկ նորա ուսերէնն անհամեմատելի է, ինչպէս նա այդ ապացուցել է Թիֆլիսում գումարուած Հնասէրների ժողովում Հայոց են դարի մասին խօսելով, ուր բոլոր գիտնականներն ամէ ի բերան միաձին վարմացած։ Խորէն վարդապետի միակ պակասութիւնը նրա անթիւ բարեմասնութիւնների մէջ՝ դիւրաբորբոքը բնաւորութիւնն է։ Նա իւր զայրոյթի միջոցին ընդունակ է ամեն բան անելու։

Աւարտում եմ գլուխ՝ որ բաւական երկարեցաւ և որ լրջմիտ Հայոց ուշադրութեան արժանի կէտեր կ՚պարունակէ։

7 հոկտեմբեր 1888 ՀՐԱՏ

ՄԵՐ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱՆԷ, ԹԵԿԷԼ, ՓԱՐԷՍ

(Շարունակութիւն)

Ռուսիա կ՚գտնուի այնպիսի վիճակի մը մէջ, որ կարծես թէ վերադարձած են իր նախկին բարբարոսութեան օրերը։ Հասարակային համերաշխութեան ղղացումը գոյութիւն չունի վերջութեան մէջ. պաշտօնատորներ աւելի իրենց անձնական շահուց հոգն ունին քան թէ երկրին ու ժողովրդեան։ Ձկայ մինջոց մ՚որ իրենց համար լաւ չինի . . . ։ Ուսեալ մարդիկ յուսահատ միջոցներու մէջ կ՚փնտռեն ձէնքեր, բիւր անգամ իրենց կեանքը վտանգի մէջ կ՚դնեն, որպէս զի յառաջ բերեն արիւնահեղութիւն քաոս մը։ Իրենց տենդային անուրջներու չնորհիւ՝ այդ քաոսը կ՚համարին իբրև անհրաժեշտ պայման ընկերային նոր կարգի մը։ Այս հիւանդութիւնը բուժելու մտօք պետական մարդիկ տարօրէն դարմաններու կ՚դիմեն։ Մին՝ կ՚ուսուցանէ թէ կ՚փրկուի ռուս ժողովուրդն եթէ անոր տրուի ազատութիւն և խորհրդարանական դրութիւն. միւսն՝ ասիական հին կաղապարներու վրայ հաստատուննալով՝ կ՚պահանջէ որ ամէն

եւրոպական օտարամուտ սովորութիւն ու օրէնք ջնջուին և Յա-
րերու ժառանգական բռնապետութիւնն ամբապնդուի · ուրիշ
մը՝ դեռ ևս կ'կարծէ թէ արիւն առնլու պէտք կայ և կ'ներքոզէ
անպայման պատերազմ Գերմանիոյ, Աւստրիոյ և Թուրքիոյ դէմ,
բոլոր աշխարհի դէմ, եթէ հարկ լինի : Եւ մինչդեռ բժիշկները
կ'վիճաբանին, խուժանը սանձարձակ կ'թալէ, կ'սպաննէ հրէա-
ները, կ'կործանէ անոնց բնակարաններն, հիմն ի վեր կ'տա-
պալէ ժողովատեղիներն և միանգամայն նախանձոտ աչք մը կը-
նետէ իշխանական ապարանաց վրայ :

Անկիոյ մէջ՝ ի սկզբան այնպէս կ'կարծուի թէ հողն հա-
տատ է և քաղաքական չէնքն ամուր : Բայց եթէ ականջ դրուի
պետինն, մարդ կ'զգայ թէ հողը կ'դղրդի, ահաւոր և սպառ-
նական որոտումներ կ'լսէ · պարիսպներու ամրութիւնն՝ որոց ա-
ժեն կողմն ծերպեր բացուած են, հետզհետէ կ'քայքայի :

Եկեղեցին, տոհմական աղնուականութիւնն և կալուածա-
կան աղնուականութիւնն զօրեղապէս կազմաւորուած են և կը-
պաչտպանեն իրենց չահերն, որոց վրայ չատ որոշ գաղափար
ունին : Քաղաքացիներն հեզօրէն կ'հնազանդին միրող դասուն
դրաւոր և անդիր օրինաց · բարեպաշտութիւն կ'կեղծեն և տիտ-
ղոսի մ'առջև կ'խոնարհին · կ'երդնուն թէ պատչաճաւոր է մի-
այն ինչոր տաս հազար աղնուապետականներու կրնան գոհացում
տալ, և թէ գռեհիկ ու աններելի բան է անոնց արտօնութեանց
հակառակիլ : Բայց բանտրը, ազատականն այս դաւադրու-
թենէ դուրս կ'մնան : Դրամագլխէն ու հողէն իրենց բաժինը
կ'պահանջեն · կ'հիմնեն ազատախոհներու և հանրավարական-
ներու ընկերակցութիւններ, արքունեաց և աղնուապետու-
թեան ցոյց կ'տան իրենց կռուին, և այն որ կ'վախցի ապա-
գան կարդալ, չէ թէ սուրճի մրուրին մէջ, պատաւ կանանց պէս,
այլ անգլիացի մուրոյներու աչաց մէջ՝ կ'տեսնէ սպառնալից
վտիտ որիկը : Խօսքս Իրլանտայի վրայ չէ : Տնտեսական յեզափա-
խութիւնն իր անդխադրելի ընթացքն սկսաւ, մարդասպանու-
թիւնն բարձրագլուխ կ'սիրէ, և եթէ անգլիական կառավա-
րութիւնն չյաջողի արեան մէջ խեղդել ժողովուրդն, սխալ
պարտաւորի թոյլ տալ չուներին բանի գլուխ ունեորին ըս-
տացուածքը · այս օրինակն անթիւ հետևողներ կրնայ ունենալ
թէ Անգլիա և թէ այլուր :

Իտալիոյ մէջ՝ թերակազմ տէրութիւն մը հազիւ ուրեմն կը-
պահպանուի հանրավարականութեան հոտանքին դէմ : Լոմբար-

տիոյ որդւոցմանէրուս և Ռուսահայոց մօրուտ ամայութեանց բանտորներն որ տենդէ կ'սարսռին և մորթախտէ կ'մաշին, խմբովին կ'զալթեն, կամ, եթէ իրենց թշուառ հայրենիքը մնան, իրարու հետ կ'վիճին մեծ հողատէրներու օրինական յետկարին վրայ, հողատէրներ՝ որոց կ'ծախեն օրն յիսուն սանդիմ ընդունելով՝ իրենց ոսկորներուն ծուծը: Խաչիոյ միութենէ ի վեր՝ երիտասարդութիւնը չունի այլ ևս հաստատ և աւանդական նպատակ մը, և անպարագրելի կ'ջանայ անոր ընծայել նոր խթել մը: Հաբաւակողմն ժողովրդեան գալտնի տառապանքն երևան կ'ելնեն Գոմոբա և Մաֆիա կոչուած նշաններով, իսկ Դանիայի մէջ՝ կրօնամոլութեամբ և նախնական հաւատարական քրիստոնէութեամբ:

Եւրոպայի ամեն աշխարհներէն Ֆրանսան թերևս իրաւունք ունի պարծենալու, առ այժմ, իր քաղաքական քաջառողջութեան վրայ: Բայց անդ ևս, քանի քանի ախտաժէտ երևոյթներ, քանի քանի հիւանդութեանց սերմեր կ'տեսնուին: Ամեն վողջոյն անկիւնն, մեծ քաղաքներու մէջ, ժողովրդային առաջնորդաններ անհնարին եռանդով կ'քարոզեն ոտացուածոց բաժանումն և քարիւղի կիրառութիւնը: Ժողովրդեան ստորին դասը կ'պատրաստուի, մերթ մեծագոչ, մերթ լռութեամբ, դրաւել կառավարութիւնը և բարձ ու պաշտօնէ, խորհրդարանական և քաղաքապետական չրջաններէ վանել այն քաղաքացիներն որ, 1789էն ի վեր կ'վարեն մինակ իշխանութիւնը: Հին կուսակցութիւններն, որ անխուսելի բախման դալուստը կը տեսնեն, կ'ուզեն դիմադրել, բայց վհերոտ, յուսակտուր և անմիաբան են, և կղերային, միապետական ու դինուորական դաւադրութիւններ կ'կազմեն այդ նպատակին համար:

Անօգուտ է փոքր պետութեանց վրայ խօսիլ: Սպանիոյ առնուն իսկոյն կարլոսական և դաշնակցական դաղափարն կ'դրդռդռէ մտաց մէջ. իսկ Նորվեկիոյ անունը կ'մնչեցնէ մեզ այն պայքարն որ կ'մղուի կառավարութեան և ազգային երեսփոխանութեան մէջ, պայքար՝ որ կ'պարտիակէ հասարակապետութիւնն, ինչպես պատուղը կ'պարունակէ կուտը: Ցանիմարգ ունի դիւղացւոց կուսակցութիւնն և հնամեայ պաշտօնէական տագնապներ. Պելժիա ունի իր սպառազէն անդրալեռնական դրութիւնն, Ամեն երկիրներն՝ հզօրներն ու տկարներն, ունին իրենց վէրքը. կ'կարծեն դանել եթէ ոչ փրկութիւն, դէթ սփոփում մը, զոհելով ամեն տարի, ահեղաւն անմխութեամբ՝ միլիոններ ու միլ-

լոններ դիւանագիտութեան համար։ Այսպէս երկրի մեծատունները, ժիջին դասուն, կ'յուսային վտանգաւոր հիւանդութենէ մը բուժիլ եկեղեցւոյն պարգևելով իրենց կալուածքը։

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 24 Հոկտեմբեր 1888

Բա՛ցեկամ, Պատրիարքական որոնդոստ փոխարինին, որ սպանդ ցուցնց առաւաւ կուսակցական ոգւոյն, այնքան հոլ օտարամոլ կրից, այնքան ոյժ դողդոջուն ձեռաց, այնքան հնարագիտութիւն պաշտօնական մտաց, այնքան առձգութիւն երեսփոխանական քուէից, վերջապէս կ'դադրի։ Երկին կ'պարզի, արշալոյսը կ'ծագի և մեծ դէպքէն երկու օր առաջ, առ ի չդոյէ լուանոյ, Նիկոմիդիոյ բարձանց վրայ վառած ջահն կարծես թէ կ'աւետէր թէ Աղդին Յոյոյ աստղն պիտի վերստին փայլէր, նոր խաղաղութեան և եղբայրակցութեան ուխտին իրև առաջին անմեղ մարտիրոս ՍՏԵՓԱՆԷՆ պիտի զոհուէր, պատրիարքական փշոտ Աթոռին վրայ Շահնաւրիդ վաղեմի իմաստասէր ախոյեանը պիտի բարձրանար, Արմաշու վանուց աստուածաբան մեծանուանը նոր կենաց և ազգային վերաչինութեան ծանր դործին պիտի կոչուէր։

Եւ իրաք՝ սեպտեմբեր 29ին մեր ծողովի Ատենապետ էֆէնտիին զանգակը կ'հռչակէր թէ՝ 76 ձայնից 66ը կոչած է Գերաիրէն Եպիսկոպոս Աշըգեան Սրբազանն ի գահ պատրիարքական։

Իսկոյն ժողովրդեան սղենտորեան դանդիւնն կ'պատասխանէ ղողանջիւնին։ Կամրջին վրայ անց ու դարձն և հեղեղանման մարդկային հոսանքը կանկ կ'առնու։ Աղաւեան՝ որ պահ մ'առաջ թատերական բեմէն կ'յուղէր հոգի ու երևակայութիւն, և ծափահարութեանց որոտմունք կ'դղրդէին մայրաքաղաքն, շէքսպիրեան անէծքն ընդդէմ քսութեան ուղղեալ առ Դիակ՝ այն ինչ կ'արտասանէր, և ահա բերանը բաց և աչիւնքն բոցավառ կ'մնան, և կ'դանէ թատրոնն առյի։ Առ Ս. Պաղն Մեծ

քիսեղեկեան Պապախանէն՝ Խաչէջն խորանէն արձակեալ, որ այնքան հուր սրտերու մէջ կ'բորբոքէր և մինչ յԵրուսալէմ կ'հանէր դղրդէր, կ'մռայլուի: Կամարականի վաթսունպետին աչքին՝ որ Թուրքիոյ հայ միլլաթականական աշխարհին նոր թուական և նոր ուղղութիւն մը տալով՝ ընդհանուր խօսակցութեան և ուսումնասիրութեան նիւթ դարձած էր, սև սուղերու մէջ կըմնայ: Մակար Սրբազանի, ի Կովկաս, առ Վեհ. Յարն Ռուսաց այցելութիւնն վնասուքի չափ ուշ կ'դրաւէ, և այդ ևս դաս մը հայ դիւանագէտներու ակմրոց մէջ: Ղալաթիոյ Սակարանի դիները կ'բարձրանան և օրագիրներն իրենց դրիչները կ'սրեն որ հանդիսաւոր պարագային յարմար չանթամիդ նկարագիրներ և ամպրոպային ճառեր արձակեն:

Գեղեցիկ ու ոսկեզի էր օրն: Սուրբ ու նուրբ հոգիները կըզրկախառնին, հաւատուորն ու հեթանոսն դիրար կ'համբուրեն և թևեր առնելով ԸՆՏՐԵԼՈՅՆ ընդ առաջ կ'թռին, չդիւին սուր չունդին և կոհակաց դաշնակաւոր ճղփիւնին միացնելով գինելի բաժակներու ըրընկն և մեղեդիներու ու ալէլուիաներու դոռ ու գոչումն: Պակաս էր միայն այդ ընդհանուր դղրդումին քան և չորս թնդանօթներու դոռումն: Հեզիոսի աստուածներն անդամ իրենց դարաւոր քունէն սթափեր և լեղու ելնելով վեզարաւորներու բերնով կ'խօսէին: Պօսիդոն, եռաժանին ի ձեռին, կ'հրամայէր Տիտանի որդւոյն՝ Պորէասի ըլել, և Նեբելիք դլխիններու վրայ ի լոյդ պար կ'բռնէին աչն ոսկւով ու մարդարտով լի նաւուն չուրջն որ նաղելարար կ'դիմէր դէպ ի Պաճիոր:

Սակայն չէր լիովին երկինք անամպ, և հանրային խնդութիւնը՝ ղուտ: Բիծեր կային յուսոյ ծիրանեդոյն բակին վրայ: Բալուտ էր օդն Պէչիկթաչի, Բուզկուննուդի, Իսկիւտարի բարձանց վրայ և Երուսաղէմատան գէնիթն: Քանի նոր արևն, Ա. Հոգեան Սրբազան, կ'մտաենար դէպ ի Ոսկեղջիւրն, հինն, արդէն ամպատատ, ևս քան զևս կ'մթնանար: Վեհապետեան՝ երկու գաւազան մէն մի ձեռքը, միոյն կ'նայէր և կ'ժպտէր, միւսին կ'նայէր և կ'հառաչէր. Տեղապահ Սրբազանն ամպրոքայլ կ'սահէր իր ճգնարանն և մէկ աչքը Սաղմոսին վրայ, միւսով հաղուեցեալները կ'դիտէր. Խորէն Նար-Պէյ Սրբազանն՝ օրուան հոգերով վաստակաբեկ, կ'սահէր հեզդօրէն դէպ իր դաշնամուր և իր սրամիտ ու հոտաւէտ մատերովն ողբագին դեղօններ, հին չքնաղականերու հառաչներ, և նուագուն յոյսերու ազօտ կայ-

ձերն կ'թրթռեցնէր, երբ յանկարծ թռելով ծովահայեաց պատուհանն կ'գոչէր . . . — Եւ սակայն ահա կ'մտաբերայ նաւը . . . :

Աւանդական արծիւն մերկ ու լերկ ժայռի մը վրայ թառած՝ կատղութիւնով կ'փայփայէր իր փետրաթափ թևերն և կ'բացագանչէր :

— Երկու միլիոն ? Հայոց քուէն ունիմ ի Ռուսիա, բայց և այնպէս խայտառակ փողով մը միայն 2 քուէ տուաւ ինձ՝ իմ յորդորակիս հակառակ : Փակ ու լակ է Սահմանադրութիւնն ըստ ածբանն :

Իսկ մի քանի տհաճ ու վէս երեսփոխանները՝ ծովափը կայտառած՝ հետաքրքիր կ'հայէին հեռուն մրմրայոյզ և չոգեչունչ վիշապն, որ թողլով օդին մէջ մութ ամպերու ոլորտաձև դիւաակ մը և պատռելով հեղուկ անդունդներն կ'սուրար դէպ ի Գուա-Գափուի ծովածոցն, և առանց իրարու երես նայելու կը խօսակցէին : Մին՝ բարձրաղէտ և բարձրամիտ՝ երբ իր սուր ու սև աչունքը սևեռած էր ծովուն վրայ, դիտեց անոր երեսն ցատկող փալփլուն իր մ'որ թևատարած արագիլի մը կատղին որս ընկաւ, և մրմնջեց .

— Ձիշտ այս ձկան պէս որս պիտի ընկնին և մեր մէջ դաս մ'երեսփոխաններ որ թէ՛ ծովու մէջ լողալ և թէ օդին մէջ թռիլ կ'փափաքին . . . :

— Եւ մինչ ունինն ապատուշ ձկնիկներ, որ եթէ ոչ ազատուին, անշուշտ կիտոսին փորը պիտի դտնեն հանգիստ, պատասխանեց իր մի ընկերն՝ որ ուներ փոքր այլ չլուտ հասակ, մանր այլ լեցուն գլուխ և իր բարակ ցպոնիէ օդը կ'ծեծէր :

— Միշտ յոռետես ես դու, և եթէ ոչ բուի, կկուի պէս կ'կրկնես միաձայն թէ ապագայ չունի Հայ ազգը :

— Եւ իրաւամբ : Կկուն ալ իր պաշտօնն ունի բազմազան թռչնոց անհուն երամին մէջ . միայն չկրցայ ըմբռնել ցարդ թէ ինչ է պաշտօնն Հայուն, ու ինչ, նպատակն ազգերու այս ընդհանուր պայքարին մէջ՝ որով արևուն տակ վայր մ'ապահովելու կ'ճգնին :

— Մեր վերջին նատին պատկերն կարող է հրահանգել ձեզ, ձայնեց քիչ մը հեռուն կեցող և իր սրածայր պէխերն չարունակ ոլորող երեսփոխան մը : Չկայ մեր կուսակցութեան մէջ միութեան կապ, դործելու և կազմակերպելու ոգի, հանճարեղ ղեկավար՝ որ ցիր ու ցան ոյժեր, լեգէոններ կազմելու պատրաստ խմբեր, հաւաքէ, ամրապնդէ և հոծ մարմին մը կազմէ միասնուն ու միակամ :

— Կու կ'անուանես դիս, և ահա կ'կրկնեմ, որ երեք հողի ենք աստ և երեք ուղղութիւն ունինք:

— Եւ որո՞ւ է յանցանքն, դոչեց սրակն երեսփոխանն: Օ՛ն միանանք: Գանն ու ապտակն անդամ մուխ եան զրկու, համաձայնութեան հրապոյր կ'ընծայեն հակառակորդ բանակին, մինչդեռ մեզի համար հրաշունչ բերաններէ, բանաւորութեան ու ճշմարտութեան խորերէն թռած պատգամներ ու չանթեր իսկ անազդեցիկ կ'մնան . . . : Ուրեմն վնասենք ուրիշ դարման մը:

— Այժմ դարմանը կ'գտնուի, ըսաւ. Նրբալեզու երեսատաղը, այն չոգենաւին մէջ որ մեզի կ'մօտենայ: Ամեն բան կ'անցնի, ամեն վէրք կրնայ դոցուիլ, եթէ նորընտիր Պատրիարքն քիչ մ'առաջ որս ընկնող ձկան պէս լողալ և միանգամայն թռչիլ չընտրէ: Նա պարտի վնասուել իր զօրութիւնն արդարութեան և Հայ ազգին կենսական իրաւանց ու շահուց պաշտպանութեան մէջ, և քանդել այն թղթեայ ամբարտակներն զոր այս մի քանի տարիներէ ի վեր մանաւանդ՝ օտարամոլ նկատումներ, դիւանագիտական սնոտի ենթադրութիւններ կանգնած են ժողովրդեան կամաց դէմ:

Նոյն պահուն ահագին շխինդ մը, և ապա ճարճատիւն մը լսելի եղան: Գաթրէճ կ'սուլէր և իր խարխոխը կ'նետէր:

— Է՛հ, դոչեց կուն, եթէ միայն Աչըդեան իր խարխոխն ալ նետէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցն և խարտեանով դուրս վանէ այն աւազակներն որ Աստուծոյ տաճարն շահուց վաճառանոց են դարձուցած, եթէ Աչըդեան իր պատրիարքական իշխանութեան կողմնացոյցն ընէ, չէ թէ մաղնիսացեալ ասեղն, այլ արդարութեան կշիռն, այն ժամանակ կրնանք յուսալ . . . :

— Յուսանք, դոչեցին երեք երեսփոխաններն, և իրարմէ բաժնուեցան տարբեր ճամբով՝ նոյն նպատակին դիմելու դիտմամբ:

ՇԱՀՆՈՒՐ

ԼՐԱԳԱՂ

Նորընծաիր Պատրիարք Ամեն. Տ. Խորէն Աշըգեան ։— Ընտրական բուռն և անախորժ պայքարներէ յետոյ՝ նախորդ ամսոյ 29ին հինգշաբթի օր Ազգ. ժողովոյ դունփակ նստին մէջ 76 քուէարկուաց 66 քուէներովը, այն է բացարձակ առաւելութեամբ՝ Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուեցաւ Արմաշու վանահայր Ամեն. Տ. Խորէն Ս. Էջմիածնոյ Աշըգեան։ Այդ ընտրութիւնն վաւերացնող Կայս. իրաւէին ի Պատրիարք օրան հաղորդուելէն անմիջապէս յետոյ՝ Նորընտիր Ամեն. Ս. Պատրիարք Հայրն հրաւիրելու համար խառն և Ազգ. ժողովոց կողմէ ընտրուած հրաւիրակներն ճամբայ ելան յԱրմաշ։ Այդ հրաւիրակներն էին.

Կրօնական ժողովէն		Քաղաքական ժողովէն	
Գեր. Գաբրիէլեան եպիսկ.	Սրուանձտեանց	Մեծ. Գաբրիէլ էֆ.	Գաբրիէլեան
Արժ. Յակոբ վարդապետ	Փափազեան	» Յովհաննէս »	Թորոսեան
» Վահան վարդապետ	Յակոբեան	» Խաչիկ »	Հաճեան
» Տ. Սահակ քհնյ.	Տ. Սարգսեան		
» Տ. Յովհաննէս քհնյ.	Մկրեան		

Ազգ. ժողովոյ կողմէ

Գեր. Գրիգորիս եպիսկ.	Ալէմթճեան	Մեծ. Մկրտիչ էֆ.	Մելիքեան
» Հմայեակ »	Դիմնքսեան	» Յակոբ »	Գուրգէն
Արժ. Ցոլեփ Ե. վրդ.	Աւվաղեան	» Յակոբ »	Պարոնեան
Մեծ. Կարապետ էֆ.	Իւթիւճեան	» Նշան »	Պէյազեան

Սոյն հրաւիրակաց ընկերացած են նաև Պատրիարքարանի կողմէ՝ Արժ. Տ. Սուքիաս Աւագ քահանայ Ստեփաննոսեան և գործակատար Աբրահամ էֆ. Ֆրէնկեան։ Պատգամաւորաց խումբն ամսոյս 13ին Պօլիսէն մեկնած է ի Նիկոմիդիա՝ Հայոց-Փաշայի կառախուզքով. անդ դիշեր մը մնալէ յետոյ՝ հրաւիրակաց մի մասն մեկնած է յԱրմաշ և սիրալիր կերպիւ ընդունուած է միաբանութեան կողմէ. շնորհաւորական բանախօսութիւնք արտասանուեր են՝ ընդ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։ Հետևեալ առաւօտ Ս. Պատրիարքն և պատգամաւորք, ընծայատեալ միաբանութեան անդամներէն, վանուց պաշտօնեաներէն և գիւղացւոց բազմութենէն՝ կառքերով և ձիերով ուղևորեր են ի Նիկոմիդիա։ Սոյն ուղևորութիւնն և ի Նիկոմիա ընդունելութիւնք խիստ փառաւոր եղեր էին, բայց ի պղպեղոց յոյնախուռն բազմութենէ, Նիկոմիդեայ կառավարիչն, զինուորական Հրամանատարն և այլ բարձրաստիճան պաշտօնատարք ընդ առաջ դացեր են Ս. Պատրիարք Հօր որ յիշեալ բարձրաստիճան անձանց շնորհաւորութիւնները ընդունելով՝ պատասխաներ է պատշաճ բանիւք։

Նիկոմիդիա հասնելով՝ Ս. Պատրիարքն և եկեղեցական հարք՝ ուղեկցութեամբ մեծ բազմութեան և առաջնորդութեամբ երգեցիկ մանկանց մտեր են յեկեղեցի և աղօթքներ կատարուեր են։ Գիշերն և հետևեալ օրն շքեղ սեղաններ տրուեր, առնախօսութիւններ և ուղերձներ արտաս-

նուէր են։ Կիրակի առաւօտ Ս. Պատրիարքն հանդիսաւոր Պատարագ մատուցեր և քարոզ խօսեր է ի ներկայութեան յոդնախուռն բազմութեան։ Նիկոմիդիոյ կառավարիչն և այլք պյսկերը են առ. Ամէն. Ս. Պատրիարք Հայրն, ի սէրան հրաւիրուեր են և փոխադարձ այցելութիւնք տեղի ունեցեր են։ Այս առթիւ գովութեամբ կը յիշուին Նիկոմիդիոյ Գեր. Ս. Առաքեորդին Գաւառական վարչութեան և կարդադիր մանաւանդին փոյթն առ եռանդն։ Երկուշաբթի առաւօտ Ս. Պատրիարք Հայրն, ընկերակցութեամբ Գեր. Առաքեորդին, եկեղեցական և աշխարհական հրաւիրակաց և բազմաթիւ պատուամաւորաց, իջեր է նաւամատոյց և կայս. կառավարութեան կողմէ յատկացեալ Մախսուսէի Գոփրէն շոգենաւն նստելով երկրին հասեր է ի Պոլիս Գումգաբուի նաւահանդիստն, ուսկից հրաւիրակաց հետ դիմաւորելու եկող եկեղեցական և աշխարհական անձանց, պաշտօնական և անպաշտօն նշանաւոր ազգայնոց և ժողովրդեան անհուն բազմութեան մեծահանդէս թափորիս՝ գացեր է Մայր Եկեղեցին ուր աղօթելէ և վեհ. Սուլթանին կենաց բարեմաղթութիւնները ընելէ յետոյ եղեր է ի Պատրիարքարանն և ընդուներ է այլ և այլ պաշտօնական և անպաշտօն երևելի ազգայնոց շնորհաւորութիւնները։ Շաբաթ երեքշաբթի օր, ամսոյս 26ին, սահմանադրական ուխտը կատարեր է Մայր Եկեղեցւոյ մէջ յատենի Ազգային ժողովոյ և ի նէրկայութեան խուռն բազմութեան և բազմեր է յԱթոռ Պատրիարքական։— Թէ ի Նիկոմիդիա և թէ ի Պոլիս Հայ ժողովրդեան կողմէ առ Ներքնաիր Ս. Պատրիարքն արտայայտուած պատուասիրական և համակրական ցոյցերն՝ թէև ծայրայեղ՝ պատուաբեր են թէ՛ Ազգին և թէ Ներին Սրբազնութեան, և քաղցր է մեզ յուսալ որ Ամէն. Տ. Խորէն Արքեպս. Պատրիարքական իր բարւոք ազդեցութ պաշտօնավարութեամբ կ'իրացնէ Ազգին յոյսերն որոյ համար ի սրտէ կարողութիւն կը մաղթենք Ներին բարձր Սրբազնութեան։

Բաճճի յետ մահուան.— Թիֆլիզի Մուշ լրագրին իր վերջին թիւերէն միոյն մէջ յօդուած մը հրատարակած է «Կէս գիշեր կէս ժամու» վերնագրով, որու մէջ յօդուածագիրը դառնութեամբ և ցաւ ի սիրտ կը յայտնէ թէ մեծանուն ողբացեալ վիպասանին ընտանիքը անհնամ վիճակի մէջ ընկած է և ապրելու համար փող չ'ունի, և թէ Թաֆֆիի երկու փոքրիկ որդիքը Թիֆլիզի Սէրգոյէ պողոտին մէջ կիրակի օրերը ինկնց հանդուցեալ հօր գրքերը կը ծախեն . . . ։ Յօդուածագիրը կը յայտնէ նաև թէ տաղանդաւոր վիպասանին գերեզմանին վրայ կանգնելի արձանին համար եղած հանգանակութեան արդիւնքը հազիւ չորս հարիւր րուբլիի հասած է. նոյնպէս հանդուցեալ հեղինակին գրուածներն հրատարակելու համար հաւաքուած դումարն հազիւ հարիւր րուբլի եղած է։ Նամակագիրն այս տխուր երևոյթներն յիշեցնով իրաւամբ կ'նշանակէ Հայ ժողովրդեան անտարբերութիւնն դէպ ի իւր տաղանդաւոր հեղինակաց յիշատակին։

Այվազովսքիի նկարները.— Հայազգի մեծանուն նկարիչ Պ. Յովհաննես Այվազովսքիի քեռորդին՝ Պ. Լևոն Մազերոնք, Ռուսիոյ Պետական խորհրդական, դբօսական պատյտի՛մ համար ամսէ մ՛ի վեր Պոլիս կը գըտնուի, և իր հետ բերած է Այվազովսքիի ճարտար վրձինէն ելած քանիևչորս զանազան նկարներ զորս բարիդ պիտի տանի և որոցմով իր մեծանուն Մօրեղբօր յանձնարարութեամբ՝ նկարահանդէս մը կազմակերպած է ռուսա-

կան դեսպանատան դռնլիճներէն մէկն մէջ, առաջարկութեամբ նոյն իսկ ռուսական դեսպան Պ. Նելիւտովի։ Այս նկարահանդէսի արդիւնքն պիտի յատկացուի բարեգործական նպատակներու։ Նկարներուն մէջ նշանաւոր են, ի մէջ այլոց, Լոռան ձոխոճ վաղէրէ վէրայ, Վէռոճ է ձոխել Աբհռ, Մրէէ է ձվռ և այլն։

Արմաշի դրդեհը։ — Նախորդ ամսոյ 27ին Արմաշու մէջ վառարէն կից տունէ մը հրդեհ ծագեր է և ուժգին հովին պատճառաւ տարածուելով՝ այրեր է 134 տուն և վանուց մի մասն, նաև վարժարանն։ Այժմ 134 ընտանիք՝ իբր 600 անձինք, անպատսպարան և անօթի մնացած են։ Անտարակոյս կայսերական կառավարութիւնն, ինչպէս ամեն նմանօրինակ պարագայից մէջ, չպիտի զլանայ օգնութեան ձեռն կարկառել Արմաշու թշուառ հրկիզելոց. նոյնպէս ազգայինք պիտի փութան նպաստ հասցնել անպատսպարան և նօթի դիւղացւոց։

Պատուհասիճանք. — Գոհութեամբ կ'իմանանք որ Վ.Հ. Սուլթանը բարեհաճեր է ընդհնել տեղւոյս Իթթէհատ Ժողովոյն անդամ՝ Մեծ. Կարապետ Էֆ. Սերճեանի և Ազգ. Ս.ժողովոյն Գարու Քհյհեանի Մեծ. Տիգրան Էֆ. Դաղտաղլեանի Բիւթպէյի Սալիոնի աստիճանը, և շնորհաւորելով այս կայսերական բարձր շնորհն, մեք խնդակցութիւնը կ'յայտնենք։

Ն.

ԲԱՂԱՔԱՑԱՆ

Մինչ կ'չարունակուի՝ մի կողմէ պաշտօնական հաւատիք թէ առ այժմ եւրոպական խաղաղութիւնն անվրդով պիտի մնայ, և միւս կողմէ Ռուսիա իր զօրադնդերն կ'կեդրոնէ ազբութեան արևմտեան սահմաններէն, ի հարկին, շուտով չարժման մէջ դնելու. Աւստրիա կրակ կ'առնէ և նոր վարկեր ծողովէն խնդրելու կ'պատրաստուի իր բանակաց այժն աւելի ևս զօրացնելու, և Ֆրանսա նոյն ուղղութեան մէջ կ'գտնուի, Ռուսիոյ հետ իր յարաբերութիւնները սեղմելու և կղզիացեալ վիճակէն ազատելու հոգն ունենալով։ Իսկ եռակի դաշնադրութիւնն իր թէ աւելի կ'ամրապնդի Գերմանիոյ կայսեր այցելութեամբ Ֆրանձ կայսեր և Հիւմպէրդօ Թագաւորին, որ իր ժողովրդեան հետ խանդալից ընդունելութեամբ կ'պատուասիրէ իր կայսերական այցելուն։ Ինչպէսի մ'առթիւ ատենախօսութիւններ կ'ուղղեն իրարու, և Ալիլհելմ կայսրն կ'հաչակէ բաղդակից պերմանական և իտալական աբբութիւններն, քանի որ սրով իրենց միաբեան

տիրացան, և Հռոմն Իտալիոյ մայրաքաղաքը կ'անուանէ, ակն. արկուիթիւն՝ որու մէջ Ս. Պապը կ'տեսնէ իր աչխարհային իշխանութեան տիրանալու յուսոյ ցնդումն, և կ'պատրաստուի Գերմանիոյ անդրալեռնականները գրգռել Պիզմարդ իշխանին կառավարութեան դէմ։ Ֆրէտէրիկ կայսեր Օբաֆէրն առ այժմ անտես կ'առնուի, թէև զայն հրատարակողն բանտի մէջ կ'սպասէ իր դատին, և Տօքդէօր Մաքէնզիի մի գիրքն՝ Անգլո-Ֆրէոէրիկ մակագրով, մեծ աղմուկ կ'հանէ և անչահ ու ցաւալի վիճաբանութիւն մը կ'յուզէ բարեյիշատակ կայսեր գերեզմանին վրայ, մինչ անոր դամբարանի չինութեան առաջին քարը կ'դնէ ի Բոցդամ որբևայրի կայսրուհին։ Սոյն գրքոյկն՝ որու գերմաներէն թարգմանութենէ բիւրաւոր օրինակներ կ'տպուին, կ'պատմէ Ֆրէտէրիկ կայսեր հիւանդութեան պատմութիւնն, բուժական խնամատարութեան տխուր պարագաներն և ջրելու կ'ձկտի գերման ազգ օրներու վայրագ յարձակումներն Մաքէնզիի դէմ, յատկապէս պատասխանատու նկատելով Տօքդէօր Պէրկմանն Ֆրէտէրիկի արագ մահուան։ Գիտուններու այս վիճաբանութիւնն անախորժ բանակռուի մը կ'դառնայ, քաղաքական կերպարան մը կ'առնու, և մինչդեռ գերման կառավարութիւնն կ'արգիլէ գրքոյկին հրատարակութիւնն, թոյլ կ'տայ իր տօքդէօրներուն որ աւելի կատաղութեամբ անուանարկեն անգլիացի բժիշկն։ Եւ Գերմանիա գանգի, կէօթէի, Հէկելի, այսինքն՝ լուսաւորութեան և ազատ քննադատութեան հայրենիքն է։ Ռուսիոյ կայսրն ալ դէպ ի Կովկաս ուղևորութենէ կ'վերադառնայ սիրալիր և եռանդուն ընդունելութիւն մը գանելէն հետ՝ և սոսկալի պատահարի մը կ'հանդիպի իսկ չոգեկառքին չեզմամբ և ինքն ու կայսերական գերդաստանն հրաշքով ծանր վտանգէ մը կ'ազատի՝ հետևորդներէն չատերն կենաղրաւ լինելով։ Ֆրանսա նոր յուզման մէջ է Սահմանադրութեան վերաքննութեան և Եկոմֆէ նոր փոքրէ հաստատութեան հիմնագիրներու պատճառաւ։ Պ. Ֆլօքէ իր վերաքննութեան հիմնագիրը կ'ներկայէ։ Էական կէտերն են. — Ընդհանուր քուէարկութեամբ ընտրել Սղզային ժողովն և երկու տարին մի անգամ 1/3 մասը նորոգել. զայն լուծելու կամ յետաձգելու իրաւունքը ջնջել. հասարակութենէ ընտրել տալ Վերակացան, որ նոյնպէս երկու տարին մի անգամ երրորդ մասով պիտի նորոգուի. սահմանափակել Վերակոյտի պաշտօնն, այնպէս որ իրաւունք չունենայ մերժել օրինագ հիմնագիր մը, այլ միայն վեց ամսուան ձգձգել, որ լսկ երկա-

մեծ ղօրութիւն ունի ան՝ ընել. Ներակոյսին ժխտել որ և է պատճառութիւն դանձային ու երևոյթան խնդրոց մէջ. Նախապահին յանձնել դահլիճի անուանումն՝ երկամեայ օրէնդրական պայմանաժամու, իրաւունք ունենալով պաշտօնէութիւնն պահել, եթէ ժողովին վստահութիւնն իսկ չվայելէ այն. Պետական խորհուրդն Ներակոյսի և ժողովի կողմէ կարգել, և օրինաց պատրաստութեան ու վիճաբանութեան մէջ միայն անոր խորհուրդ հարցնել — : Այս վերաքննութեան հիմնագիրն յանձնաժողովի մը քննութեան կ'յանձնուի, թէև եօթն ուրիշ հիմնագիրներ ևս կան ի պահեստի . . . :

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎ Ի ՋՄԻՒՌՆԻԱ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցեղւոյս Գաւառական ժողովոյ որոշմամբ՝ ազգային դիւանատան կողմէ խմբագրութեանս հաղորդուած վերջին մի քանի նիստերու Ափենտրօնենց կարևորագոյն մասները յատուկ յօնլայնով կ'հրատարակենք ի ծանօթութիւն Ազգ. հայ Հասարակութեան :

Գաւառական ժողովոյ վերջին նիստերու օրակարգը կ'պարունակեր Ընտրողական ժողովոյ Ցեղկոպէն և սոյն Ցեղկոպրի վերաբերեալ խնդիրներ, Առջեն օրոց խնդիր, 1888—89 ղեկան նշանակեալ խնդիր, Աստղնդրական ընթերցանց տանէ խնդիր և այլն :

Գաւառական ժողովն օգոստոս 26ին իր 7րդ նիստը կազմեց ընդ նախագահութեամբ Ցեղապահ Հօր և առեւնագրութեամբ Մնձ. Ազգապան կարապետ էֆէնտիի, և քան որում մեծամասնութիւն չունէր, զգաղեցաւ մինչ մինչ առենական գործերով և մի քանի պաշտօնական դէպրութեանց ընթերցմամբ : Այս դրութեանց մէջ կար Ընտրողական ժողովոյ Ցեղկոպէն վրայ և Գաղաքական ժողովոյ դիտողագիրն, որոց օրինակն է այս :

Մեծապատիւ Ատենապետ էֆէնդի,

Գաւառական Պատ. ժողովը յանձնարարած էր նաև Տեղական 20 երեսփոխաններէն հրաժարումն ու վախճանումը պակասած 12 երեսփոխանաց տեղն լեցնել նոր ընտրութիւն կատարելով։

Վարչութիւնս այդ դործին համար ընտրեց մի Ընտրողական ժողով որոյ անդամքն են. Յակոբ էֆ. Մերկերեան, Մեսրոպ էֆ. Նուպարեան, Պետրոս էֆ. Տիլպէրեան, Յարութիւն էֆ. Չարոնեան և Մեսրոպ էֆ. Սիմոնեան, և յանձնեց անոնց 12 երեսփոխանաց ընտրութեան դործը։

Ընտրող ժողովը իր աշխատութեանց Տեղեկագրէն յունիս 13 թուակիր, ընդ նմին և իւր արձանագրութեանց տումարն հաղորդեց ժողովոյս զոր կ'ներկայանք ի հետաքրքրութեան Պատ. ժողովրդ հանդերձ ինչ ինչ դիտողութեամբք։

Նախ՝ Ընտրող ժողովը իր դործն թերի թողուլ՝ հրաժարական տուած է, ինչպէս կ'տեսնուի Տեղեկագրին վերջը.

Երկրորդ՝ անդամոց մին Մեսրոպ էֆ. Սիմոնեան ստորագրած է Տեղեկագրէն իւր մասնաւոր դիտողութեամբ, որով կ'յայտնէ թէ՝ օրինաւոր համարուած քուէթղթոց օրինաւորութեան չէ համոզուած.

Երրորդ՝ քուէթղթոց օրինաւորութիւնը քննելու համար ժողովս Ընտրող ժողովոյ արձանագրութիւններն աչքէ անցընելով՝ անոնց մէջ դտաւ հետեւեալներն —

Պօղոս Պետրոսեան անուն մէկը 12 քուէթուղթ բերեր է յորմէ 7ը կեղծ լինելն հաստատուելով ժողովը պատեհ է դանէք, իսկ մնացեալ 5ը իրեւ օրինաւոր ընդուներ է.

Սրմենակ Մինասեան անուն մէկը 7 քուէթուղթ բերեր է, յորմէ մէկը կեղծ լինելն հաստատուելով՝ ժողովը պատեհ է գտնէ, իսկ մնացեալ 6ը իրեւ օրինաւոր ընդուներ է.

Խաչատուր Կ. Ալաջարեան մէկը 26 քուէթուղթ բերեր է, յորմէ 2ը կեղծ լինելն իմացուելով ետ տուեր է. Խաչատուր պահ մը ետքը նոցա իսկական քուէթղթերը բերեր է, և ժողովը իրեւ օրինաւոր ընդուներ է զանոնք։ Սակայն նոյն երկու քուէթղթոց միոյն տէրը անձամբ դալով ժողովոյն տեսչ բողոքեր է թէ՝ ինք քուէթուղթ չէ տուած. Ընտրող ժողովը դայն ևս պատեհ է, սակայն մնացեալ 25 քուէթղթերն իրեւ օրինաւոր ընդուներ է.

Ընտրող ժողովոյ մէջ խօսք ծագեր է ի մասին մերժելոյ Նա-
հատուր Կ. Աղաղարեանի բերած միւս քուէթղթերն, բայց ղինի
խորհրդակցութեանց՝ վերջապէս ընդուներ է զանոնք դիտելով
թէ՝ անոնց դէմ բողոք մի չկայ, և քանի որ Ազգային տուրքերն
վճարած են, միայն կասկածի վրայ չենլով չկրնար մերժուիլ։

Ազգ. վարչութիւնս զայս ամենն ի նկատ առնլով՝ կը փու-
թայ իւր կարծիքն յայտնել, որ է՝ Ընտրող ժողովն կեղծ քուէ-
թղթերն պատռելէ ղինի՝ փոխանակ քուէհամարի ձեռնարկե-
լու, շատ լաւ կ'ընէր դիմել վարչութեանս և տարակուսական
կէտերը պարզելով հրահանգ խնդրէր քուէհամարը կատարելու
կամ ոչ. բայց Ընտրող ժողովն զայդ չէ ըրած, և վարչութիւնս
կը տարակուսի թէ՝ կատարուած քուէարկութիւնն օրինաց պա-
հանջած ճշդութիւնն ունի՞ թէ ոչ։ Ուստի չկրնալով Ընտրող ժո-
ղովոյ Տեղեկագիրը վաւերացնել՝ Պատ. ժողովոյդ քննութեան կը
յանձնէ զայն, և նորա բարձր որոշման կ'սպասէ։

Առաջնորդական Տեղապահ
ՏԷՐ ՅՈՎՀ. ՔԱՀԱՆԱՅ ՄԻՆԱՍԵԱՆ

*ժողովը սոյն նստին մէջ մի քանի երկրորդական խըն-
դիրներ նկատողութեան առնլէ ետև՝ վաւերացուց Տէ-
նիզլիի և Նաղիլլիի երեսփոխան՝ Յարութիւն Էֆ. Իվլի-
ճեանի ընտրութիւնն և ընդունեց Պատրիկ Էֆ. Կիւլպէնկ-
եանի հրաժարականն կեդր. ժողովոյ երեսփոխանութենէ։*

ՆԻՍՏ ՅՐԴ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1888

*Այս նստին մէջ Դիւանի փոփոխման խնդիրն նկատո-
ղութեան առնուելէն ետև՝ կարդացուեցաւ վարչութեան
դրոյն հետ Պատրիարքական Գեր. Տեղապահի մի դիրն,
որով կ'խնդրէ փութացնել Առաջնորդի ընտրութիւնն, և
առաջնորդական ընտրելոց եռանուն ցանկին յաւելուլ
Գեր. Օրմանեան Սրբազանի անունը։*

Զէյնէկեան Էֆ. —Ինչպէս յայտնի է մեր ամենուն, եթէ մին-
չև ցարդ առաջնորդական ընտրութիւնը յետաձգուեցաւ, պատ-
ճառն Երեսփոխանական ժողովոյ կամքէն անկախ պարագա-
ներ եղած են։ Մեր ամենուն ալ փափաքը օր առաջ երեսփո-

խանական ընտրութիւնները կատարելով անմիջապէս Առաջնորդի ընտրութեան ձեռնարկել է։ Ուստի կ՚առաջարկեմ որ՝ վարչութեան հրահանգ տրուի այս իմաստով կեդրոնական վարչութեան պատասխան տայ որպէս զի կեդր. վարչութիւնը չկարծէ որ մենք հոս անգործ կեցած կը քնանանք, այլ միշտ և առանց յուշարարաց պէտք ունենալու կ՚աշխատինք։

Ըստ սոյն առաջարկութեան որոշուեցաւ յանձնարարել վարչութեան։

Լուսֆէլի Եֆ. Պալեզեան. — Կեդրոնական վարչութեան սոյն պաշտօնագրոյն մէջ Առաջնորդական ընտրելեաց ցանկին վրայ Դեր. Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեանի անունն աւելցնելու յանձնարարութիւն կայ, զոր կ՚առաջարկեմ կցել սոյն ցանկին վերաբերեալ գրութեանց, որպէս զի ժողովը ժամանակին նկատողութեան առնու։

Այս ևս ընդունուեցաւ միահամուռ հաճութեամբ։

Ապա կարդացուեցաւ Տ. Յակոբ անուն քահանայ Պալապանեանի հրաժարագիրն երեսփոխանութենէ, և որոշուեցաւ Օրակարգն անցընել։

Օրակարգի Ա. խնդիրն էր Տեղեկութիւն Ընտրողական ժողովոյ, որ կարդացուեցաւ։

Ափենապեթ Եֆ. Ընտրողական ժողովոյ Տեղեկագրի մասին ժողովոյ կարծիքն հարցուց։

Զիլինկիրեան Եֆ. — (խօսքն ուղղելով առ Մեսրոպ Եֆ. Սիմոնեան, անդամ Ընտրող. ժողովոյ) ինչո՞ւ Ընտրող. ժողովոյ հետ համաձայն ստորագրել մերժեցիք և զատ ստորագրած էք։

Մեսրոպ Եֆ. Սիմոնեան (Աստենադպիր). — Որովհետև քուէհամարի օրը բացակայ էի քաղաքէս, և երբ վերադարձայ՝ տեղեկացայ որ քուէարկութեանց ժամանակ ինչ ինչ դէպքեր տեղի ունեցեր են. ինչպէս. Ընտրող. ժողովոյ անդամ Արթին Եֆ. Չարոնեանի եղբօր անուամբ քուէթուղթ մի բերուեր է, որուն ստորագրութեան կեղծ լինելն Արթին Եֆ. տեսնելով՝ այն քուէթուղթն մերժուեր է. ըսել է որ՝ եթէ Արթին Եֆ. չըլլար՝ միշեալ կեղծ քուէթուղթն ընդունուած կ՚ըլլար։ Այսր նման ուրիշ դէպքեր ևս իմանալով՝ քուէից բոլորին անկեղծ լինելուն համոզուած չէի. ուստի խիղճս հանգարտեցնելու համար իմ մասնաւոր կարծիքս յայտնելով ստորագրեցի։

Պեթթոս Եֆ. Կ. Տէլեէեան (Անդամ Ընտրող. ժողովոյ)։ — Այդ և այդպիսի դէպքերն մանրամասնութեամբ արձանագրուած են մեր տեղեկագրութեանց մէջ։

Պօղոս Եֆ. Վ. Պէրպէրեան։ — Ատոնց ամեն մէկը մեկ առիթ պատահելով ճանչցուած են իբրև կեղծ։ Եթէ առիթը չպատահէր կեղծ քուէթղթերն իբրև օրինաւոր ընդունուած պիտի ըլլային։ Աւելին կայ. կեղծ քուէթղթերն արդէն քուէարկին մէջ ձգուած էին, շատ կարելի է որ հանուածներէն շատ մեծաթիւ կեղծեր կը դտնուէին։

Լ. Եֆ. Պալեօզեան։ — Արդարև խիստ ցաւալի խնդիր մ'է, որ այս պահուս Պատկ. Ժողովոյդ կը ներկայանայ։ Ընտրող. ժողովոյ տեղեկագիրն և Վարչութեան դիտողագիրն կարդալով, մասնաւոր տպաւորիչն մը չզգալ անհնար է, և այդ ալ՝ այլ և այլ պատճառներով։ Նախ՝ դի եթէ Ընտրող. ժողովն իր պաշտօնը անթերի և անաչառ կերպով դործադրած ըլլար, այժմ երեսփոխանական ընտրութիւնները կանոնաւորապէս կատարուած և ժողովն իր ամբողջութեամբը գումարուած ըլլալով Առաջնորդը ընտրած կամ ընտրելու վրայ պիտի ըլլար։ Ասկէ զատ՝ ամեն ճշմարտասէր և արդարասէր անձի համար մեծ ցաւ է տեսնել թէ՝ կուսակցական ոգին որ աստիճան կրնայ դրդռել մարդկային կիրքերը և սորա աղետաբեր հետեւանքները ոչ միայն արդարասիրութեան առջև դատապարտելի՝ այլ նոյն իսկ օրինաւոր պատժելի գործեր կատարելու կը մղէ։ Թէև Ընտրող. ժողովոյ Տեղեկագիրը և Վարչութեան Դիտողագիրն, որք քիչ մ'առաջ կարդացուեցան, կրնան մեր մտաց մէջ մասամբ հաւանութիւն դոյացնել ընտրութեանց կատարման պարագային և գործուած անկանոնութեանց վրայ, բայց այսչափը բաւական չէ որոշում տալու համար։ Այսպիսի ծանրակշիռ խնդրոյ մը վրայ Ձեր Պատկ. Ժողովը պարտի ամենայն ապահովութեամբ վճիռ արձակել, և սորա համար ալ պէտք է որ խնդրոյն ամեն կողմերը ուշադրութեամբ քննուին, Ընտրողական ժողովոյ արձանագրութիւններն ու Տեղեկագիրը, Վարչութեան նամակին պարունակութիւնները, քուէարկուած առարկութիւնները կրող պահարանները և այլն ուշադիր քննութեան բովէն անցնին և ի հարկին՝ Ընտրող. ժողովոյ անդամք կոչուին բացատրութիւն տալու համար։ Եւ վերջապէս ամենէն ուշադիր քննութենէ յետոյ միայն պէտք է որոշման յանդիլ, և ինչպէս որ Երեսփոխանական ժողովոյ համար կարի դժուար և

դրեթէ անկարելի է այս մանրամասն քննական դործողութիւն-
ները անձնականանալէն կատարել, և ինչպէս որ այսպիսի պարա-
դայից մէջ առ հասարակ սովորութիւն է՝ կ'առաջարկեմ որ ե-
րեք անդամէ բաղկացեալ յանձնաժողով մի կազմուելով՝ անոր
յանձնարարուի որ հարկ եղած քննութիւնները ամենայն ուշա-
դրութեամբ և անաչառութեամբ կատարէ, և իւր վերջնական
եզրակացութեամբ հանդերձ արդիւնքը Պատի. ժողովոյդ տե-
ղեկագրէ, և ժողովէ՝ յայնժամ միայն կրնայ հանդարտ խղճիւ
վերջնական որոշում տալ ի մասին կատարուած ընտրութեանց
հաստատութեան կամ մերժման։

Զէյնէլեան Եփ. — Կատարուած ընտրութեանց նկատմամբ
տեղի ունեցած դէպքերն ատուգիւ ցաւալի են։ Նոյն իսկ վար-
չութեան դիտողադրէն ալ կը հասկցուի որ հարկ կայ քննու-
թիւն բանալու։ Ուստի համամիտ լողոֆէթ էֆէնտիի՝ կ'առա-
ջարկեմ յանձնաժողովի կազմութիւնը, որուն քննութեանց ար-
դիւնքն պիտի իմացուի թէ՝ պէտք է ըստ Սահմանադրութեան
վաւերացնել կատարուած ընտրութիւնները թէ՝ բեկանել։

Յարությեան Եփ. Իփէֆեան. — Յանձնաժողովի պաշտօնը քըն-
նել է թէ վճիռ տալ։

Լոռ Եփ. Պալեոզեան. — Արդէն ձգեցինք այդ կէտը. յանձ-
նաժողովի պաշտօնն պիտի ըլլայ քննել և եզրակացութեամբ
հանդերձ տեղեկագրել Գաւառական ժողովոյն։

Ապենապեր Եփ. — Յանձնաժողովի անդամոց թիւը ճը քիչ է,
պէտք է դոնէ ճ ըլլայ։

Լոռ Եփ. Պալեոզեան. — Այս տեսակ յանձնաժողովներու բազ-
մաթիւ անդամներ ունենալը աւելի վնասակար է քան թէ օգ-
տակար. պի այդ աւելի առ հասարակ բացակայներ կը դըտ-
նուին, որով գործին կատարումը կ'ուշանայ, և կամ մեծամաս-
նութեամբ միայն կը կատարուի. և ըստ իս՝ այսպիսի պարա-
դայից մէջ համաձայնութեամբ խմբագրուած տեղեկագիրներն
աւելի յարգելի են։

Մամուրեան Եփ. — Ամեն սահմանադրական պետութեան մէջ՝ որ-
դէն յայտնի է՝ կուսակցութիւններ կը կազմուին, որ ունին ի-
րենց յատուկ ծրագիրներն, և մանաւանդ ընտրութեանց ժա-
մանակ կը մաքառին իրարու դէմ իրենց ընտրելեաց յաղթանա-
կին համար։ Յորչափ այս պայքարն օրինաց սահմանին մէջ մնայ,
դովելի է. սակայն երբ կուսակցութիւն մը բուռն կիրքէ մղեալ
ի գործ կը դնէ միջոցներ՝ որ դատապարտելի են թէ օրինաց և

թէ հչմարտութեան առջև, այն ժամանակ ոչ միայն իրենց քուէն արժէքն անգիտացած՝ այլ և անպատուած կը լինին այն ընտրելիներն որոց ընտրութեան համար ասպարէզ իջած են։ Այսպիսի պարագայից մէջ քննութիւնը երեան կը հանէ ապօրինաւորութիւններն, և տեսած ենք ատկէ որ լոկ մի անվաւեր, կեղծքուէ պատճառ եղած է բեկանելու ընտրութիւններ որոց մասնակից եղած են հազարաւոր ընտրելիներ, առանց այս կամ այն կողման դժգոհութեան առիթ տալու։ Արդ՝ մեր երեսփոխանական մասնաւոր ընտրութեանց առթիւ տեսանք պայքար մը. բայց դժբաղդաբար Ընտրողական ժողովոյ Տեղեկագիրն՝ որ տեղ տեղ մութ կէտեր ունի, և ընտրութիւնը չատարած հրաժարիլն, ինչպէս նաև Պատ. Քաղաքական ժողովոյ այս մասին ներկայացուցած դիտողագիրն ընտրութեան պարագայից մասին, տարակուսելու պատճառներ կը տան մեզ։ Ընտրութեան խնդիր է այս և ոչ ընտրելոց, որոց մէջ անշուշտ կան չատ յարգելի անձեր, և անտարակոյս այս անձերն իրենց արժանապատուութեան չեն թողուր ապօրէն քուէի չնորհիւ բազմիլ Երեսփոխանական ժողովի մէջ։ Երբէք նախատատել չէ միտքս այս ընտրութիւններն, այլ լոկ յայտնել թէ Գաւառական ժողովին պարտաւորութիւնն է օրէնքն յարդել ու յարդել տալ, և ներկալ խնդրոյն վրայ համոզում ցոյացնելով իր որոշումն արձակել։

Նախագահ Հայր. — Յանձնաժողովի քննութեան ձգելով՝ չըլայ թէ՝ գործը երկարաձգուի. քանդի սահպղական և կարևոր չատ գործեր կան մեր առջև կատարելու համար։ Ուստի՝ եթէ կարելի է՝ քննութիւնն Գաւառական ժողովի ինքնին կատարէ, որպէս դի չուտ աւարտի։

Լոր. Եփ. Պալեճեան. — Խնդիրը քիչ մը ևս պարզելու պէտք կը տեսնեմ։ Երևսփոխանական ժողովոյ համար անկարելի է քննել Ընտրողական ժողովոյ արձանագրութիւնները և այլ դրութիւնները՝ որք ընտրական գործողութեանց կը վերաբերին։ Եւ իրոյ կ'իմանամ որ կան նաև քուէից պահարանները՝ որք քուէարկուաց ստորագրութիւնները կը կրեն. ասոնք քննուելով՝ թերևս վարչութեան դիտողութիւններէն ուրիշ բաներ ևս երևան գան։ Ուստի անհրաժեշտ հարկ կը տեսնեմ խնդիրը մանաժողովոյ յանձնելու. և եթէ առանց ասոր ժողովդ ուղղակի ընդունելու կը միտի, ինչպէս որ յայտնուած կարծիքներէ այնպէս կ'ըմբռնեմ, ինձ խղճս չներեր այդ սխալ հաստատել որոշման մասնակցելու։ Ուստի վերատին կը կրկնեմ՝ հարկ անհրա-

ժեչտ է մասնաժողով մը կազմելու, որ յետ մանրամասն քննութեան իւր տեղեկագիրը ներկայացնէ։

Նախագահ Հայր։ — Այդ ճիշդ է, և ես գործը որչափ կարելի է՝ վերջով վերջացնելու համար կ'ըսեմ։

Ատենապետ էֆէնտին խնդիրը ձեռամբարձ քուէի դրաւ սա բանաձեւով. —

«Կառարուած ընտրական գործողութեանց քննութիւնն և եզրակացութիւն պարունակող տեղեկագիր բերելը՝ Գաւառական ժողովոյ մէջէն ընտրուած 3 անդամովք մասնաժողովի մը յանձնել պէտք է, եթէ՝ Գաւառական ժողովոյ ինքնին քննութեանը թողուլ»։

Միահամուռ քուէիւք ընդունուեցաւ յետոյ մասնաժողովի յանձնելը։

Սոյն Մասնաժողովին անդամ ընտրուեցան,

Արժ. Տ. Աւետիս քահանայ Ոսկերիչեան
Մեծ. Պօղոս էֆ. Վարպետեան
» Լուղ. » Պալեօղեան
» Գր. » Չիլինկիրեան

և խօսք տուաւ 15 օրէն իր տեղեկագիրը ներկայել ժողովին։

Ուրիշ մի քանի երկրորդական խնդիրներ ևս տնօրինելէն ետև՝ ժողովը օրակարգը կազմեց և առեանը վերցաւ ժամը 7ին։

ՆԻՍՏ ՅՐԴ

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1888

Սոյն նստին մէջ ինչ ինչ դիտողութիւնները լինելէն ետև Դիւանի փոփոխումն անմիջապէս վճռտարելու մասին, ժողովը անցաւ օրակարգի Ա. խնդրոյն որ էր,

Քննիչ մասնաժողովոյ Տեղեկագիրը։

Ատենապետ էֆ. — Քանի որ, ըստ օրակարգի, Մասնաժողովոյ Տեղեկագրի ընթերցումն է որ կը խնդրուի, սիրով կ'ընդունինք։

Այս ըսելով անցաւ Օրակարգին։

ԽՆԴԻՐ Ա.

Ընդհանրական ժողովոյ պեղեկագիրը և Ազգային Մասնաժողովոյ պեղեկագիրը.

Լոյս ԼՃ. Պալեօլեան : — Ընտրողական ժողովոյ դործերը քննելու և տեղեկագրելու պաշտօնով կազմեալ յանձնաժողովս, խոստացած ժամանակէն յառաջ իւր պաշտօնը աւարտած ըլլալով, այժմ իմ միջոցաւ իւր Տեղեկագիրը կը մատուցանէ, որոյ համար Ձեր ուշադրութիւնը կը խնդրեմ: (Զայս ըսելով կարդաց Տեղեկագիրն, որոյ պատճէնն է.)

Մեծապատիւ Կարապետ Էֆէնտի Արապեան,
Ատենապետ Գաւառ. Երեսփոխանական Ժողովոյ.

Պատկառելի Ժողովոյդ ՅՐԴ նստին մէջ, վերջին Ընտրողական ժողովոյ կատարած ընտրական դործողութիւններն քննելու պաշտօնով կազմեալ Յանձնաժողովս, իրեն յանձնուած պաշտօնը՝ ամենայն ուշադրութեամբ և անաչառութեամբ կատարելով, այժմ պատիւ ունի իւր Տեղեկագիրը մատուցանելու:

Յանձնաժողովս իւր քննութեանց դլխաւոր նիւթ ըրաւ Ընտրողական ժողովոյ նիստերու ընդհանուր ատենադրութիւնը, յորում արձանագրեալ կան նորա նիստերու մէջ տեղի ունեցած անցից և անդ. յուղեալ խնդրոց մանրամասն նկարագիրը, և միանգամայն՝ ի հարկին՝ բացատրութիւն պահանջեց Պ. Ս. Պալասանեանէ, որ Ընտրողական ժողովոյ դիւանադպրութեան պաշտօնը կատարած էր:

Սոյն ատենադրութեան մէջ, հետևեալ կէտերը մասնաւորապէս Յանձնաժողովոյս ուշադրութիւնը դրաւեցին.

Նախ թէ՝ Ընտրողական ժողովը՝ բովանդակ քուէները պահարանաց մէջ ընդունելու դրութեան հետևելով հանդերձ, վրայի ստորագրութեանց ճշմարիտ կամ կեղծեալ ըլլալը քննելու բնաւին հարկ չէ տեսած, մինչդեռ պատառական հրահանգի 13ՐԴ յօդուածը, սոյն քննութեան անհրաժեշտ պէտքը կը ցուցնէ: Այս վարմունքը, որ հիմնովին հակառակ է սոյն հրահանգի ոգւոյն թէ տառին, քուէարկութեան ակիդքէն մինչև վերջը կը չարունակէ:

Երկրորդ թէ՝ Պօղոս Պետրոսեան անուն անձ մը, պահարանները մէջ փակեալ 13 քուէթուղթ կը ներկայացնէ, զորս՝ Ընտրողական ժողովը, առանց վրայի ստորագրութեանց ճշդութիւն

նը քննելու և միայն Ազգային ժող. վճարելու ըլլալը առաջ-
լով կ'ընդունի և քուէտուփը կը նետէ։ Երկու օր ետքը 4 ան-
ձինք ներկայանալով՝ իրենց անձնական քուէները կը մատուցա-
նեն, և Ընտրողական ժողովը յետ քննութեան անոնց կը ծա-
նուցանէ թէ՝ արդէն Պօղոս Պետրոսեան անուն անձին ձեռօք՝
իրենց անունով քուէներ ներկայացած և ընդունուած են։ Սոյն
չորս անձինք, որոնց անուններն են՝ Յակոբ Տուխատուրեան, Գրի-
գոր Կիւլեան, Յարութիւն Ժամկոչեան և Սահակ Ժամկոչեան,
յողնքելով՝ իրենց որ և է մէկու քուէ յանձնած չըլլալը կը յայ-
տարարեն։ Ընտրողական ժողովը, խնդիրը պարզելու դովելի
նպատակաւ, անմիջապէս Պօղոս Պետրոսեանը իւր առջև կը կո-
չէ, որ ներկայանալով՝ սոյն չորս անձանց իրեն բոլորովին ան-
ծանօթ ըլլալը և անոնց քուէները Տիվանի Գաստարի որդին
Խաչատուր իրեն յանձնած ըլլալը, և միանգամայն իւր բերած
մուս քուէթղթոց մէջ, իրեն անծանօթ ուրիշ երեք անձանց
քուէները դանուիլը կը ծանուցանէ, որք են՝ Երեմիա Յովհան-
նէսեան, Խաչատուր Համբարձումեան և Յակոբ Տէր Կարապետ-
եան։

Ընտրողական ժողովը, յետ խորհրդակցութեան, կ'որոշէ,
քուէհամարի պահուն սոյն եօթն քուէթղթերը միւս քուէներէն
զատելով՝ իբր կեղծ ոչնչացնել։

Վերոյիշեալ չորս անձինք, իրենց նոր քուէից ընդունելու-
թեան համար վերստին կը սպդեն, սակայն Ընտրողական ժո-
ղովը նախ իրենց ազգային տուրքը վճարել յանձնարարելով՝ կը
մերժէ անոնց քուէները։

Արդ՝ Յանձնաժողովս այս դիպուածին մէջ ուշադրութեան
արժանի երկու կէտ կը նշմարէ. նախ թէ՝ Ընտրողական ժողովը՝
վերոգրեալ չորս անձանց անուամբ ներկայացեալ կեղծ քուէ-
ներն արդէն ընդունած և քուէտուփը նետած ըլլալով, անոնց
ազգային տուրք վճարուած ըլլալը ընդունած և հաստատած էր,
և հետևաբար մի և նոյն անձանց արդար քուէները՝ ազգային
տուրք պատճառաւ մերժելով, զանոնք իրենց ընտրողական իրա-
ւունքէն զրկած էր։

Երկրորդ թէ՝ վերոգրեալ երեք անձանց անունները Պօղոս
Պետրոսեանի անծանօթ ըլլալը պատճառելով, և առանց քննու-
թիւն կատարելու, քուէները մերժելով՝ յայտնապէս անոնց ի-
րաւունքը բռնաբարած էր, և այս՝ նոյն ինքն Ընտրողական ժո-
ղովոյ առենագրութեամբ կը հաստատուի. դի նորա շրջ նախ

առեւնագրութեան Գրդ պարբերութեան վերջին մասէն կը տեսնուի որ Յակոբ Տէր Կարապետեան, որ սոյն երեք անձանց մին է, քուէհամարիչն անմիջապէս առաջ ժողովոյ ներկայանալով, իւր անունով մատուցած և յետոյ մերժուիլ որոշուած քուէին իւր անձնական ճշմարիտ քուէն ըլլալը կը յայտարարէ և զայն մերժումէ կ'աղաչէ. բայց միւս երկու քուէները, իրր կեղծ կը ջնջուին, թէև անկողմնակալ քննութիւն մը ասոնց ևս անկեղծ քուէները ըլլալը կարելի է երևան կը հանէր: Այս առթիւ ուշադրութեան արժանի կէտ մի ևս ի տես կուգայ: Պողոս Պետրոսեանը 13 քուէ կը ներկայացնէ, և ասոնցմէ մասնաւորապէս 3ը, մի միայն քուէարկուաց իրեն անծանօթ ըլլալուն համար կը մերժուին, մինչդեռ ուրիշ աւելի բազմաթիւ քուէներով բեռնաւորեալ անձանց, Ընտրողական ժողովոյ կողմէ այդպիսի հարցում մը երբէք ուղղուած չէ, և ասով՝ ընտրական գործողութեանց մէջ բացարձակ կողմնակալութիւն տեղի ունեցած ըլլալը յայտնի կը տեսնուի:

Երրորդ թէ՝ Ընտրողական ժողովոյ Ըրդ նատի առեւնագրութեան 5րդ, 6րդ և 7րդ պարբերութիւններէ յայտնի կը տեսնուի որ քուէարկութեան մէջ կեղծ քուէներ ներմուծելու փորձեր եղած են, և այս փորձերուս գոյութիւնը դիպուածով երևան ելած ըլլալը բացայայտ ըլլալով հանդերձ, դէթ սոյն կեղծ քուէներու ընկերացող ուրիշ քուէից ճշդութիւնը քննելու համար որ և է փորձ չէ եղած, այլ ամենայն անտարբերութեամբ և կամ միամտութեամբ բոլորն ալ ընդունուած են:

Չորրորդ թէ՝ Ընտրողական ժողովոյ 6րդ նատի առեւնագրութեան 7րդ և 9րդ պարբերութեանց համեմատ, Խաչատուր Կ. Աղաղարեան անձը 26 քուէթուղթ կը ներկայացնէ պահարանայ մէջ ներփակեալ, որոնց մէջ կը գտնուին նաև Սարգիս Հարոնեանի և Մկրտիչ Ֆրէնկեանի առորագրութիւնը կրող քուէթուղթեր: Այս երկու անձանց ձեռագիրը Ընտրողական ժողովոյ անդամոց ոմանց ծանօթ ըլլալով, քննութեամբ պահարանայ վրայի առորագրութեանց կեղծ ըլլալը կը յայտնուի, և հետևաբար սոյն երկու քուէթղթերը կը մերժուին: Խաչատուր Կ. Աղաղարեան պահ մ'ետքը վերստին ժողովոյ ներկայանալով՝ մերժեալ կեղծ քուէթղթերը սխալմամբ տուած ըլլալը կը յայտնէ և վերոյիշեալ երկու անձանց, Սարգիս Հարոնեանի և Մկրտիչ Ֆրէնկեանի, իրր բուն առորագրութիւնը կրող երկու նոր քուէթղթեր ևս կը մատուցանէ, որք օրինաւոր համարուելով կ'ընդ-

դուռնուին: Թէև պահ մը, Ընտրողական ժողովը Խաչատուր Կ. Աղաղարեանի բերած քուէից մնացեալ 24ին ևս, այս երկու քուէից նման կեղծ ըլլալուն կարելիութիւնը նկատելով, զանոնք խմբովին մերժել կը խորհի, սակայն մասնաւոր բողոքողները չըգոհանալուն, միայն կասկածի վրայ յենլով՝ սոյն քուէները մերժել անկարելի ըլլալը Ընտրողական ժողովոյ Ատենադպրին կողմէ առարկուած ըլլալով՝ մերժման խորհուրդը ի բաց կը թողուի. և այս ամէն խորհրդածութեանց և որոշմանց մէջ, սահմանադրութիւնները քննելու և տուգելու խնդրոյն, որ ճշմարտութիւնն յայտնելու պարզ և օրինաւոր միջոցն էր, և ոչ իսկ յիշատակուած ըլլալը ուշադրութեան արժանի է: Բայց Խաչատուր Կ. Աղաղարեանի բերած քուէից խնդիրը դեռ վերջացած չէր: Ըստ 7րդ նսեմ ատենադրութեան 2րդ պարբերութեան, Մկրտիչ Ֆրէնկեան լսելով որ յանուն իւր քուէ տրուած է, յանդիմդարան ներկայանալով կը յայտարարէ թէ՝ ինք որ և է անձի քուէ ուղիղ չէ տուած և թէ չկամիր իսկ քուէարկութեան մասնակցիլ և հետևաբար կը պահանջէ որ՝ իւր անուամբ տրուած քուէն անտուկէն հանուի, և այս կերպով քուէհամարի պահուն սոյն քուէն ևս պատուելով կ'ջնջուի, որով Խաչատուր Կ. Աղաղարեանի ձեռօք, մի և նոյն անձի անուամբ, երկու անգամ կեղծ քուէ տրուած, և այն երկուքն ալ Ընտրողական ժողովոյ կողմէ իբր ճշմարիտ և արդար քուէ ընդունուելու պահուն, դիպուածով ննջգութեան երևան ելած ըլլալը կը հաստատուի:

Արդ՝ այս ամէնն ուշադրութեամբ դիտելէ և տուգելէ յետոյ, Ցանձնաժողովս իրեն յանձնարարեալ խնդրոյ վրայ խղճի կատարեալ հանդարտութեամբ համաձայնութեամբ գոյացուցած ըլլալով՝ քննութիւնն առաւել ևս յառաջ վարել հարկ չդատեց: Եւ նկատելով որ՝ Ընտրողական ժողովը, հակառակ գաւառական հրահանգի բացայայտ արամադրութեան, քուէից պահարանները վրայի ստորագրութեանց ճշդութիւնը բնաւ քննած չէ.

Նկատելով որ՝ Ազգային տրոց վճռման խնդիրը յարուցանելով, չորս աղգայնոց օրինաւոր քուէները մերժած է, մինչդեռ յառաջուց յանուն նոցա բերուած կեղծ քուէներու առթիւ անոնց ազգային տրոց վճռուած ըլլալը ստուգած և ըստ այնմ սոյն կեղծ քուէներն ընդունած էր.

Նկատելով որ՝ Պօղոս Պետրոսեան անուն անհատի անծանօթ ըլլալնուն պատճառաւ երեք ազգայնոց քուէները կը մեր-

ժէ, որոյմէ միայն օրինաւորութիւնը քիչ մ՚ետքը յայտնուելով հանդերձ, միւս երկուքի մասին որ և է քննութիւն չկատարեր.

Նկատելով որ՝ քուէարկուներու անձանց՝ քուէ բերողներու ծանօթ կամ անծանօթ ըլլալուն քննութիւնը միայն վերոյիշեալ առթիւ կատարած ըլլալով, որ և է ուրիշ քուէ բերողի այդ սիսմի հարցում ըրած չէ.

Եւ վերջապէս նկատելով որ՝ բազմաթիւ քուէթղթեր ներկայացնող Խաչատուր Կ. Աղազարեանի սոյն քուէից մէջ, դիտութեամբ նենգեալ քուէթղթեր ներմուծած ըլլալը հաստատելով հանդերձ և հրահանգի բացարձակ տրամադրութեան հակառակ, առանց որ և է քննութիւն կատարելու, մնացեալները ամբողջովին կ՚ընդունի, և այս կերպով քուէարկութեան մէջ խարդախեալ քուէներ մուծանելու դիւրութիւն կ՚ընծայէ.

Հետևաբար Յանձնաժողովս, իր ստորագրեալ անդամոց միասին հաւանութեամբ կ՚եղրակացնէ, և Պատիւ. Ժողովոյդ կ՚առաջարկէ բեկանել վերջին Ընտրողական ժողովոյ ձեռնք կատարուած երեսփոխանական ընտրութիւնը։

Մնամք յարգանօք	Անդամք Յանձնաժողովոյ
	ԱՒԵՏԻՍ ՓՀԷՆՑ. ՈՍԿԵՐՉԵԱՆ
1888 Հոկտեմբեր 7	ՊՕՂՈՍ ՎԱՐՊԵՏԵԱՆ
ի Զմիւռնիա։	ԳՐ. ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ
	ԼՕՂ. ՊԱԼԵՕՋԵԱՆ

Լ՚ոչ Է՛ֆ. Պալեօճեան. — (Տեղեկագրի ընթերցումէն ետք) Թէև Ընտրողական ժողովոյ անդամներէ բացատրութիւն պահանջելու և քուէից պահարաններու ստորագրութիւնները քննելու և ստուգելու խօսքեր եղած էին վերջին նստին մէջ, սակայն Յանձնաժողովս Ընտրողական ժողովոյ արձանագրութիւնները քննելով՝ այնպիսի անկորչելի գործողութիւններ տեսաւ, որք բաւական եղան կատարեալ համոզում գոյացնելու. ուստի Յանձնաժողովս աւելի ժամանակ կորուսանել հարկ չտեսնելով, և իր տեղեկագիրը պատրաստելով, այսօր Պատիւ. Ժողովոյդ կը ներկայացնէ։

Ատենապետ Է՛ֆէնտի Քննիչ Յանձնաժողովոյ սոյն Տեղեկագրի վրայ Ժողովոյ կարծիքը հարցուց։

Մեսրոպ Է՛ֆ. Սիմոնեան. — Կը տեսնեմ որ իմ դիտողութիւնս Տեղեկագրին մէջ նկատողութեան չէ առնուած. մինչդեռ ես ճիշդ այս նկատմամբ ստորագրած էի։

Յարութիւնեան Է. Իվլիտեան. — Ես ինքնին ականատես եղած եմ Ընտրողական ժողովոյ գործողութեանց և բողոքած իսկ եմ. բայց իմ բողոքներս անլսելի ձայնին. ուստի խորին չնորհակալութիւն կը յայտնեմ Գննիչ Յանձնաժողովոյ որ այսպիսի ճիշդ տեղեկագիր մը բերած է։

Աբժ. Տ. Գեորգ Մաֆկինեան. — Տեղեկագիրը շատ ճիշդ է։ Մանաւանդ որ երբ քուէարկու մը իւր քուէն պահարանով կը ղրկէ, պէտք է յատուկ նամակաւ մի ղրկէ զայն որ տարակուսի տեղի չմնայ. դժբաղդաբար կը տեսնենք որ այդպէս չէ եղած Ընտրողական ժողովոյ գործողութեանց մէջ։

Ատենապետ Էֆէնտի խնդիրը քուէի դրաւ սա բանաձևով. «Գննիչ Յանձնաժողովոյ Տեղեկագրի եղրակացութեան համաձայն պէ՞տք է բեկանել վերջին անգամ կատարուած երեսփոխանական ընտրութիւնները, թէ՝ ընդունիլ զայնս իբրև օրինաւոր ընտրութիւն»։

Բաց ի Նախագահ Տէր Հօրմէն, որ Ընտրող. ժողովոյ նիստերուն նախագահած ըլլալուն համար ձեռնպահ մնաց, ձեռամբարձ միահամուռ քուէով որոշուեցաւ բեկանել եղած ընտրութիւնն իբրև հակառակ Սահմանադրութեան հրահանգաց։

Գր. Ֆ. Զիլինկիրեան. — Քանի որ կատարուած ընտրութիւնները բեկան, և քանի որ Գաւառական ժողովոյ պակասած թիւը հարկ է լրացնել Առաջնորդի ընտրութեան ձեռնարկելու համար, կ'առաջարկեմ որ նամակ գրուի առ Վարչութիւն որ փութով Ընտրողական ժողով մի կազմէ, ընտրութիւնները փութացնելու համար։

Միահամուռ ձայնիւ ընդունուեցաւ սոյն առաջարկն։

ԽՆԴԻՐ Բ.

Ազէտչին գործ ո՞ր պարէտէն սկսեալ վճռբեալ խնդիրն.

Ապենապեթ Է. — Կ'առաջարկեմ որ նոր քուէարկութեան առթիւ ազգային տուրք չպահանջուի, որովհետև դեռ նոր վճռած են քուէարկուք. և եթէ նոր տարուան տուրքերն ևս պահանջուին, կրնայ ժողովրդեան մէջ յուզմունք ծագիլ և ընտրութեանց երկարաձգման առիթ տալ։

Գր. Ֆ. Զիլինկիրեան. — Օրէնքը ժողովրդեան կանքէն չատ վեր է. եթէ մենք ուրիշներուն ապօրինաւորութիւն կը վերապրենք, մենք ինքնին ապօրինաւորութեան մէջ չընկնինք։ Գա-

լով 25 տարիքէն սկսեալ ազդային տուրք պահանջելու խնդրոյն, Սահմանադրութիւնն բացորոշ կերպիւ կը խօսի թէ՝ ամեն ազդային անհատ, որ չափահաս է և վաստակի տէր, պարտաւոր է ազդային տրոց մասնակցիլ ըստ կարողութեանն: Հետևաբար մէկը իրաւունք չունի ըսելու «Ես դեռ 25 տարեկան չեմ, ազդային տուրք չեմ վճարեր»: Ընդ հակառակն՝ ամեն չափահաս ազդային, որ գործի տէր է, պարտի վճարել: Սահմանադրութեան նշանակած 25 տարիքը միայն քուէարկու ըլլալու համար է, և ոչ թէ ազդային տրոց մասնակցելու: Ասոր հետ միասին կ՚առաջարկեմ որ քուէարկութեան իրաւունք չունենան որոնք որ տարեկան 25 ղրուշէն վար՝ ազդային տուրք կը վճարեն: Այս սահմանը չկրնար խիստ նկատուիլ երբ խորհինք թէ՝ Կ. Պոլսոյ մէջ քուէարկութեան հիմ բռնուած է տարեկան 75 ղրուշ ազդային տուրքի վճարումը:

Ա. Էֆ. — Այդ՝ իմ առաջարկիս պատասխան չէ: Ես ըսի թէ՝ ասկէ յառաջ կատարուած ընտրութեանց առթիւ ազդային տուրքերն առնուած են, նոր տարուանը չպահանջուի, թէ ժողովրդեան վրայ չծանրանալու և թէ գործը վարժով և կատար հասցնելու համար:

Գր. Էֆ. Զիլինկէրեան. — Անհատական պատասխան. եթէ տարին լրացած է և նոր տարին մտած, պէտք է ամեն ոք իր նոր տարուան տուրքը վճարէ:

Մեսր. Էֆ Սիմոնեան. — Կ՚առաջարկեմ որ դ պրոյէն ելնող ամեն անհատ, որ վաստակի տէր է, ըստ իւր կարողութեան մասնակցի ազդային տրոց:

Լ. Ղ. Էֆ. Պալեօղլան. — Այդպիսի մանրամասնութեանց մէջ մտնելու և սահմաններ դնելու ամենևին հարկ չեմ տեսներ, դի Սահմանադրութիւնն արդէն այդ սահմանը գծած է. 90րդ յօդուածը կը տրամադրէ թէ՝ ամեն անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, տուրք կը վճարէ: Տէրութեան օրէնքը, որուն հպատակելու պարտականութիւն ունինք, չափահասութեան վերջին սահմանը 15 տարին կը նշանակէ. արդ՝ ամեն անհատ՝ որ օրինայ սահմանին մէջ չափահաս կրնայ նկատուիլ, և առանձինն վաստակի տէր է՝ պարտաւոր է ազդային տուրքը վճարելու: Գալով Ատենապետ Էֆէնտիի առաջարկութեան, զոր եթէ լաւ կըրցայ ըմբռնել, վերջին ընտրութեանց առթիւ իրենց տուրքը վճարող ազդայիններէ նոր տուրք չպահանջելու առաջարկութիւն է. արդէն ինքնին Դիւանատան տետրակներով կարգադրելի խնդիր

մի է. դի մինչև նոր ընտրութեանց կատարումը եթէ անաւարտ նոր տարւոյ մէջ չմտնենք, բնականաբար նոր տուրք չվճարուի. իսկ եթէ նոր տարւոյ մէջ կը մտնենք, անտարակոյս ամեն ընտրող իւր պարտքը վճարելու հարկին մէջ կը գտնուի: Վիճաբանութեան ենթարկեալ բուն խնդրոյն գալով, ստոյգ է որ վերջին ընտրութեանց միջոցին ընտրողներէն ոմանք միմիայն 25րդ տարիքէն սկսեալ ազգային տուրք վճարելու խնդիր յարուցին, և վարչութեան Քաղաքական Ժողովը այս առարկութեան հանդէպ միջին ճամբայ մը բռնելով առժամապէս այդպէս գործել հրահանգեց, պայմանաւ որ յառաջիկային սոյն խնդիրն Գաւառական Ժողովոյ ներկայանայ և անոր որոշման համեմատ գործուի: Արդ՝ այժմ խնդիրը ձեր Պատիւ. Ժողովոյ առջևն է, և ես կը յայտարարեմ որ՝ սոյն կարգադրութիւն Սահմանադրութեան մէջ ոչոյն մէջ տեսին հակառակ է: Ըստ Սահմանադրութեան այն ամեն անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, իւր կարողութեան համեմատ ազգային տուրք վճարելու պարտականութիւնն ունի: Քանի և հինգ դրուշ և աւելի տուրք վճարողներուն միայն ընտրողութեան իրաւունք տալու առաջարկութիւնը ևս կայ. դայս թէ՛ բնական և թէ՛ սահմանադրական կը գտնեմ, ինչպէս որ Պօլսոյ մէջ կատարեալ վերջին ընտրութեանց առթիւ 75 դրուշ և աւելի տուրք վճարողները միայն ընտրողութեան իրաւունք ունեցան. հոս ևս պէտք է սահման մը որոշել. և ըստ իս՝ 25 դրուշը շատ չափաւոր և յարմար է. ուստի Զիլինկիրեան Էֆէնտիի առաջարկութիւնը կ'երկրորդեմ:

Մեսր. Էֆ. Ալմաճեան. — Ըստ իս՝ 25 դրուշը շատ է. կ'առաջարկեմ 20ի իջեցնել, որպէս դի դիւրութիւն լինի ընտրողաց:

Առաջարկութեան տէրը համաձայնեցաւ սոյն առաջարկին:

Մամուրեան Էֆ. — Եթէ լաւ ըմբռնեցի Լոզոֆէֆ Էֆէնտիի խօսքերը, կը տեսնեմ որ երկու խնդիր կը ներկայէն Պատիւ. Ժողովոյդ նկատողութեան. մին է հաստակի, միւսն է քուէարկութեան տուրքն: Իրօք Սահմանադրութիւնը բացորոշ կ'ըսէ թէ՝ ամեն ազգային անհատ, որ չափահաս է և վաստակի տէր, պարտի մասնակցիլ ազգային ծախուց: Նոյնպէս կը պահանջէ թէ՝ 25 տարիքը լրացուցած ազգայինը միայն կարող է քուէարկու լինիլ: Սակայն կարծեմ թէ՝ ոմանք Սահմանադրութեան հասատութենէ ի վեր տանից քուէարկութեան օրինական հաստակն ունենալու՝ ազգային տուրք վճարած են, բայց չատեր այդ պարտաւորութիւն չեն կատարած, կամ վարչութեանց անհոգութեան, կամ չափահաս և վաստակի տէր անձանց դժկամակութեան պատճառաւ, և հետևաբէս 30րդ յօդուածն առնել անդործադրելի մնացած է: Արդ՝ չատ անդամ երբ օրէնքն անտես կ'առնուի սովորութեամբ, այդ սովորութիւնն տեսակ մը օրէնք

կ'ղառնայ, թէև վեղծուած է։ Հիմակ՝ սովորութեամբ դադրած օրէնքի մը գործադրութիւնը պահանջել՝ կարծեմ՝ զանազան դժուարութեանց տեղի տալ է, և այս դժուարութեանց գլխաւորն է բաւական տարիներէ ի վեր իրենց ազգային տուրքը չվճարող չափահաս և վաստակի տէր անձերու վիճակը դատել և որոշելը։ Հաշուական բաւական մեծ գործողութիւն մ'որ ազգային տուեալներն իսկ չպիտի կրնան յուցնել։ Շատ դժուարին, չըսեմ անհնարին, պիտի լինի գտնել թէ՝ ազգային անհատ մը, որ քուէարկելու տարիքն ունի արդէն, որ ժամանակէն սկսեալ չահու տէր եղած է, և իրը այն՝ թէև ազգային տրոց մասնակցելու պարտաւոր, այլ այդ պարտաւորութիւնը չէ կատարած։ Իմ կարծեօք՝ լաւ կ'է՝ որ ըստ առաջնոյն քուէարկութեան տարիքն, որ է 25, հիմ բռնուի և չարունակուի առանց պահանջ յարուցանելու նախորդ տարիներու անուամբ ազգային տրոց մասին։ Այս կերպով Վարչութիւնն ալ դիւրութիւն կ'ունենայ դանձել ազգային տուրքն, զոր պարտին վճարել 25 տարին լրացնողները։ Դալով միւս կէտին, քուէարկութեան իրաւունքն չատերուն մատչելի ընելու համար երբեմն Գաւառական ժողովն բաւմամբ մ'ըրած էր, կէս մէճիտ որոշելով ամենէ յետին աստիճանն։ Այժմ կ'առաջարկուի բարձրացնել այդ գումարն. այդ մասին դիտողութիւն չունիմ։ Թերևս քուէի յարգը չդնահատող ժողովրդոց համար կարևոր է անոր նիւթական արժէքն աւելի զգալի ընել, ինչպէս լուսաւորեալ ազգաց մէջ անգամ կ'ընեն։

Գր. Եփ. Զիլինկիրեան. — Օրէնք մը անգործադրելի մնալովը ջնջուած չըլլար, մինչև որ զայն դնող իշխանութեան կողմէ չըջնջուի այն. ուստի Պ. Մամուրեանի առաջարկութեանց մին չեմ ընդունիր, այսինքն 25 տարեկան հասակը մանուղը միայն ազգ. տուրք վճարէ. այդ հակառակ է Սահմանադրութեան որ կ'ըսէ թէ՝ ամեն ազգային անհատ՝ որ չահու տէր է՝ ըստ կարողութեանն պարտի մասնակցիլ ազգային տրոց։ Իսկ միւս առաջարկութիւնն՝ այսինքն ամենէ վար աստիճան՝ կէս մէճիտը բարձրացնելու կարծիքին համամիտ եմ։

Յարութիւն Եփ. Իփլիքեան. — Վերջին ընտրութեանց ժամանակ չատ անգամ ականատես էի, իբրև Տնտեսական Խորհրդոց անդամ, որ չատեր գալով իրենց անկարողութիւնը կը յայտնէին ազգային տուրք չտալու համար, առարկելով թէ՝ չունին տէր չեն և իրենց հօրը հացը կ'ուտեն։ Ընդ հակառակն կը ճանչէի զիրենք որ յաճախ սրճարաններ և ուրիշ զբօսավայրեր կ'երթային ատակ վատնելու։ Ուստի, ըստ իս՝ դպրոցէն ելնողները չափահաս կը համարուին, հետևաբար պարտին ազգային տուրք վճարել։

Գր. Եփ. Զիլինկիրեան. — Դպրոցէն ելնողները չափահաս նկա-

առնու կարծիքը բոլորովին սխալ է. աշակերտ մը կրնայ այլ և այլ պատճառներով դպրոցէն ելնել իննի կամ տասը կամ տասն և մէկ տարին հագիւ լրացնելէն ետք։ Ըստ օրինաց մանչ տղուն քաղաքային չափահասութիւնը կ'սկսի տասներկու տարեկան հասակէն և կ'վերջանայ տասնուհինգ տարեկան հասակին հետ. իսկ վճռաւորականական չափահասութիւնը քսանուժէկ տարեկան հասակն է։ Ուստի դպրոցէն ելնող աշակերտէ մը ապդ. տուրքը պահանջելու համար նկատուելու երկու կէտ կայ. մին՝ անոր ըստ օրինի չափահասութեան հասակը մտած ըլլալը, երկրորդ՝ վաստակի տէր ըլլալը։ Կը կրկնեմ թէ՝ այս երկու պայմաններու էութեամբ միայն պահանջելի է ապդ. տուրքը։

Յարութիւն էֆ. Իվլիճեան. — Սահմանադրութեան այդ կէտը մութ է։

Զաքէր. — Սահմանադրութեան իմաստն՝ չահու տէր ըլլալն է և ոչ չափահասութեան։

Լորդ էֆ. Պալճըլեան. — Այս մասին ինձ կը թուի թէ՝ սխալ հասկացողութիւն կայ։ Մեր բարեկամ Ձիլինկիրեան էֆէնտի խնդիրը կրնար ուրիշ կերպով բացատրել։ Վճռաւորականական չափահասութիւն ըսուածը՝ իսկական չափահասութիւն չէ, այլ անհատի մը վճռաւորականական դործողութեանց մէջ մտնելու, պայմանադրութիւններ ստորագրելու և այլ յարակից վաւերականդործեր կատարելու համար վճռաւորականական օրինօք որոշեալ տարիքն է, և այս՝ մեր դործողութեանց հետ յարաբերութիւն չունի. բուն քաղաքային չափահասութեան վերջին սահմանը 15 տարին է, և այս՝ Մէճէլլէի օրինօք ճշդեալ է. ուստի մենք օրէնքը փոխելու կարող չենք, այլ՝ անոր համաձայն դործելու պարտաւոր ենք։

Աւետնապետ էֆ. — Ըստ իս՝ Իզմիրի Գաւառական ժողովը քանի որ ժամանակին որոշեր է 25 տարիէն սկսեալ պահանջել ապդ. տուրքը, մենք պէտք չէ այս որոշումը փոխենք։ Ուստի կ'առաջարկեմ որ նոյն կերպիւ մնայ մինչև որ առաջիկայ ընդ. րութիւնք կատարուին, և յետոյ երբ Երեսփոխանութիւնն ամբողջանայ՝ ժողովը իր ամբողջութեամբը, եթէ կ'ուզէ, նոր որոշում ընէ։

Նախագահ Հայր. — Ես ևս համամիտ եմ Աւետնապետ էֆէնտիին. քանի որ այս որոշումը ժամանակին եղած, ընդունուած և մինչև ցայժմ չարունակուած է, պէտք է նոյն կերպիւ չարունակուի։

Լորդ էֆ. Պալճըլեան. — Աւետնապետ էֆէնտի, խնդրեմ, խընդիրը քուկի դրէք։

Աւետնապետ էֆէնտին հետևեալ բանաձևը կարդաց, զոր խմբագրած և ստորագրած էին Կարապետեան Աբրահամ, Պալ-

եօղեան Լոզոֆէթ և Զիլինկիրեան Գր. Էֆէնտիներն.

«Իզմիրի Գաւառական Ժողովը կ'որոշէ թէ՝ նախ՝ 25 տարին լրացնող ամեն հայ՝ ընտրող ըլլալու համար՝ կը պարտաւորի վաստակի տէր եղած ժամանակէն ի վեր դիզուած իր տզր. տուրքը վճարելու.

«Երկրորդ, ամեն հայ իր ընտրողութեան իրաւունքը վայելելու համար կը պարտաւորի առ նուազն տարին քսան դահեկան տուրք վճարող ըլլալ»:

Պօղոս Էֆ. Վարպետեան. — Այդ բանաձեւին վրայ դիտողութիւն ունիմ. առաջ մէջ պարունակեալ երկու խնդիր կայ, և երեսփոխանաց մէջ թերևս կրնան դանուիլ անձինք՝ որ մէկ խընդրոյն համաձայն՝ միւսին անհամաձայն դանուին. ուստի այդ բանաձեւը եթէ քուէի դրուի, արդիւնքն ինչպէս յայտնի պիտի ըլլայ:

Բանաձեւին առարադրողք սոյն դիտողութեան վրայ համակերպեցան որ երկու խնդիրներն զատ զատ քուէի դրուին:

Ատենապետ Էֆէնտին ձեռնարկեց քուէի դրաւ բանաձեւի առաջին խնդիրն, որ ընդունուեցաւ միահամուռ քուէով:

Երկրորդ խնդիրն ևս քուէի դրաւ, որ ընդդէմ երեք քուէի ընդունուեցաւ ժողովէն:

Ատենապետ Էֆէնտին քուէից արդիւնքն յայտնելով՝ բանաձեւին երկու խնդիրներն ևս ժողովոյ կողմէ ընդունուած և որոշուած ըլլալն հռչակեց:

Գ. Մայր Դիւանի ֆոթոկոպի. — Ի վերջէ ժողովը Մայր Դիւանի փոփոխման ձեռնարկեց, և ընտրութիւն կատարելով՝ Ատենապետ Էֆ. քուէից արդիւնքը հրատարակեց: Այս արդեանց նայելով՝ Մայր Դիւանի անդամքն են.

Ա.	Ատենապետ	Լոզոֆէթ Էֆ.	Պալեօղեան
Բ.	»	Գրիգոր	» Զիլինկիրեան
Ա.	Ատենապետ	Մեսրոպ	» Սիմոնեան
Բ.	»	Պետրոս	» Տիլպէրեան

Ատենապետ Էֆէնտին ժողովոյ կողմէ շնորհաւորեց նորընտիր Դիւանն. և ժողովը շնորհակալութիւն յայտնեց նախորդ դիւանի անդամոց:

Ատեանը վերցաւ ժամը 7½ին:

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ